

**ԱՌՈՂՋԱՎԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ԵԹԻԿԱՅԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՁԵՐԻԾ ԲԽՈՂ  
ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԹՐԱՖԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆԺ ՀԵՏ  
ՀԱՐՃԱՎՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ**

**OSCE**

**ORGANIZATION FOR SECURITY  
AND CO-OPERATION IN EUROPE**

**ԵՎՐՈՊԱՅԻ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**



**WORLD HEALTH ORGANIZATION**

**ԱՌՈՂՋԱՎԱՀՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱԿԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

---

ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԾՆԱՐՁԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ  
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՆՉՆԵՐԻՑ ԲԽՈՂ  
ԽՈՐՃՈՒՐՈՒԵՐ ԹՐԱՖԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ  
ԿԱՆԱՆՑ ՀԵՏ ՀԱՐՑԱՁՈՒՅՑՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՍԱՐ

## Երախտիքի խոսք

«Առողջապահության համաշխահային կազմակերպության էթիկայի և անվտանգության պահանջներից բխող խորհուրդներ թրաֆիկինգի ենթարկված կանանց հետ հարցազրույց վարելու համար» գրքույկը գրվել է Կերի Ցիմերմանի և Շարլոտ Վուտցի կողմից, Լոնդոնի հիգիենայի և արևադարձային բժշկության դպրոցի առողջապահության քաղաքականության բաժին:

Զգալի օժանդակություն և փորձագիտական խորհրդատվություն է տրամադրվել Թերեզ Քառետի, Մարինա Ցվետկովայի (ՉեՅՆԶ, Լոնդոն), Մարթինա Վանդերբերգի (Human Rights Watch, Վաշինգտոն, Դի. Սի.), Բրետ Աղամսի (Human Rights Watch, Նյու Յորք), Սաե-տանգ Ժիրավորնի (Յանաշխարհային դաշինք ընդդեմ կանանց թրաֆիկինգի, Թայլանդ), Իննա Շվերի (Լա Ստրադա, Ուկրաինա), Մարսիա Ալբրեչտի (Կանանց թրաֆիկինգի դեմ պայքարի Ես-Թի-Վի հաստատություն, Նիդերլանդներ), Նայյա Կոզուհարովայի, («Անիմուս» միության հիմնադրամ, Բուլղարիա), Ֆրանկա Բիմբի, Լուսա Տրապոլիի և Մարիանժելա Տրեպպետի (Պաղուայի համալսարան, սոցիոլոգիայի ֆակուլտետ, Իտալիա), Կատերին Յանի (Յարվորի բժշկական դպրոց, Բոստոն), Էլեյն Փիերսոնի («Անտի-սլեյվորի ինթերնեյշնլ»), Աննուսկա Դերկսի և Բրունո Մոենսի (Պայուկե, Բելգիա) կողմից:

Գրքույկի պատրաստմանը մեծապես նպաստել է Կլաուդիա Գարսիյա-Մորենոյի (Գեներո և Կանանց առողջությունը, Առողջապահության համաշխահային կազմակերպություն, Ժնև), Ալիսոն Ֆիննեյի (Վճառների և բռնության կանխումը, Առողջապահության համաշխահային կազմակերպություն, Ժնև) և Ժո Նրսիի (Լոնդոնի հիգիենայի և արևադարձային բժշկության դպրոց, Լոնդոն, և Առողջապահության համաշխահային կազմակերպություն) վերջնական խմբագրումը և վերանայումը:

Գրքույկը պատրաստվել է Եվրահանձնաժողովի «Դաֆնի» ծրագրի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության աջակցությամբ:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	5
ԹՐԱՖԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՍԱՑ ԲԱՐԴ ՀԱՍԳԱՄԱՍՔՆԵՐԸ	6
ՏՐԱՖԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՍԱՑ ՀԵՏ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՍՑԵՐԸ ԲՎԿԱՐԱՐՈՂ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՏԱՍԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆԵՐՆԵՐԸ	8
<b>1. ՉՎԱՆԱՑԵԼ</b>	<b>9</b>
1.1 ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ	9
<b>2. ԻՄԱՑԵՔ ԶԵՐ ՆՅՈՒԹԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԵՔ ՈՒԽԿԵՐԸ</b>	<b>10</b>
2.1 ՀՆԱՐԱՎՈՐ ՈՒԽԿԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ	10
2.2 ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՓՈՒԼԵՐԸ. ՈՒԽԿԵՐ ԵՎ ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐ Փուլ առաջին. սկզբնական կոնտակտը Փուլ երկրորդ. հարցագործույցի ժամանակի և վայրի ընտրությունը Փուլ երրորդ. հարցագործույցի ընթացքը Փուլ չորրորդ. հարցագործույցի ավարտը	12
<b>3. ՊԱՏՐԱՍՏԵՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.</b>	<b>16</b>
<b>ՄԻ ՏՎԵՔ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՑ ԶԵՐ ԿԱՐՈՂ ԿԱՏԱՐԵԼ</b>	<b>16</b>
3.1 ԿԱՍԱՑ ՀԱՍՈՒ ՈԵՍՈՒՐՄՆԵՐԻ ԵՎ ԱԶԿԱՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՐԱՅՅՈՒՄ	16
3.2 ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԵԼԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՆԱԳԵԼԸ	17
3.3 ՇՐՋԱՐԱՅԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՎԱՐԵԼԻՒՄ	17
<b>4. ՖԻՇԸ ԸՆՏՐԵՔ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ ԹԱՐԳՎԱՆԻՉՆԵՐԻՆ ՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ</b>	<b>18</b>
4.1 ԹԱՐԳՎԱՆԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՍԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՈՒԽԿԵՐՆ ՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	18
4.2 ԱՐԱԿԱՆ ՄԵՌԻ ԹԱՐԳՎԱՆԻՉ ԿԱՄ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐՈՂ ՎԱՐՁԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ ԱՇԽԱՏԱՎԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐՈՂՆԵՐԻ ՖԻՇԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ	19
4.3 ԱՇԽԱՏԱՎԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐՈՂՆԵՐԻ ՖԻՇԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԲԱՐՕՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ	20
<b>5. ԱՊԱՐՈՎԵՔ ԱՆԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ</b>	<b>22</b>
5.1 ԿՈՆՖԻԴԵՆՑԻԱԼՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՈՒՄ	22
<b>6. ՍՏԱՑԵՔ ՀԱՐՑՎՈՂԻ ԿՇՈԱԴԱՏՎԱԾ ՀԱՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆԸ</b>	<b>23</b>
6.1 ԿՇՈԱԴՎԱԾ ՀԱՄԱՁԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՊԱՏճԱճ ԶԵՎԵՐԸ	23
<b>7. ԼՍԵՑԵՔ ԵՎ ՀԱՐԳԵՔ ԻՐ ԻՐԱՎԻճԱԿԻ ԵՎ ԻՐԵՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԿՆՈԶ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ</b>	<b>25</b>
7.1 ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐ ԿԱՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԵԼԸ	25
7.2 ԻՐ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՆՈԶ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԳԵԼԸ	26
<b>8. ԿՆՈԶԸ ԿՐԿՆԱԿԻ ՏՐԱՎԱՅՐԻ ՄԻ՛ ԵՆԹԱՐԿԵՔ</b>	<b>27</b>
8.1 ԿՆՈԶԸ ԿՐԿՆԱԿԻ ՏՐԱՎԱՅՐԻ ՀԵՏՄԱՐԿԵԼԸ	27
<b>9. ՊԱՏՐԱՍՏ ԵՂԵՔ ՄԻԶԱՄԱՏԵԼՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻճԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ</b>	<b>28</b>
9.1 ԾՏԱՊ ԿԱՄ ԱՆՀԱՊԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐՈՂ ԿՆՈԶԸ ԿՐՋԱԳԱՎԱՔԵԼԸ	28
9.2 ՄԻԶԱՄԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԹԱՅԼԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼԸ	29
9.3 ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ	30
<b>10. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՀԱՎԱՔԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b>	<b>31</b>
10.1 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ	31
ՎԵՐՋԱԲԱՆ	32
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	33



## ԱՌՈՂՋԱՊԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՀԱՐՑԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՐԱՍՑԵՐԻՑ ԲԽՈՂԻ ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐ ԹՐԱՖԻԿԱՆԳԻ ԵՆԹԱԿԱՎԱԾ ԿԱՍԱՑ ՀԵՏ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՍՄՐ

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Դարձադրված մարմնավաճառությամբ զբաղվելու և ստրկության նման կամ շահագործման պայմաններում աշխատելու համար կանաց և աղջիկների թրաֆիկինգը հետզիտեն դառնում է աշխարհի ամենաարած տարածվող հանցագործություններից և մարդու իրավունքների ամենակոպահիտ խախտումներից մեկը: Մարդկանց, և հատկապես կանաց և երեխաների թրաֆիկինգը կանխելու, արգելու և պատժելու նաև ՍԱԿ-ի արձանագրությունը տալիս է թրաֆիկինգի հետևյալ սահմանումը.

«ուժի, ուժ գործադրելու սպառնակիքի կամ հարկադրման այլ միջոցներով, առևանգման, խարդախության, խարեւության, դիրքի չարաշահման միջոցով, դիմացինի անպաշտպան վիճակից օգտվելու, համաձայնություն ստանալու համար մարդկանց վրա ազդեցություն ունեցողին գումար կամ այլ օգուտ տալու կամ ստանալու միջոցով մարդկանց հավաքագրում, տեղափոխում, փոխանցում, ապաստանում կամ ընդունում՝ շահագործման նպատակով: Շահագործումն իր մեջ ներառում է առնվազն հետևյալը. մարմնավաճառությամբ զբաղվելու պարտադրանք կամ սեռական շահագործման այլ ձևեր, հարկադրված աշխատանք կամ ծառայություններ, ստրկություն կամ ստրկության նման այլ պրակտիկա, պարտույթ կամ օրգանների հեռացում»:<sup>1</sup>

Ի պատասխան ողջ աշխարհում թրաֆիկինգի դեպքերի քանակի արագ աճին, և քանի որ քաղաքականություն մշակողներին, դրույթներին, ծառայությունների մատուցողներին և ԶԼՄ-ներին գնալով ավելի ու ավելի մեծ ծավալի տեղեկություններ են անհրաժեշտ թրաֆիկինգի վերաբերյալ, մարդիկ ավելի հաճախ են սկսել հարցագրույց անցկացնել թրաֆիկին-

գի ենթարկված կանաց հետ, որպեսզի վերջիններս կիսեն իրենց փորձը: Դարցագրույցներ են անցկացվում ինչպես դեռ թրաֆիկինգի թրավիճակներում՝ թրաֆիկինգով զբաղվողների, գործատունների կամ կավատների հսկողության տակ գտնվող, այնպես էլ թրաֆիկինգի իրավիճակներից արդեն դուրս եկած՝ ապաստաններում, ծառայություններ մատուցողների խնամքի տակ գտնվող կամ արդեն տուն վերադարձած կամ այլուր վերահստատված կանաց հետ:

Այս հանգամանքներից որևէ մեկում թրաֆիկինգի ենթարկված կոնց հետ հարցագրույցը մի շարք էթիկական հարցեր է առաջ բերում, ինչպես նաև մտահոգություններ այդ կոնց, իր մերձավորների և հարցագրույց վարողի անվտանգության համար: Թրաֆիկինգի հետ կապված ոիսկերի, եթիկական խնդիրների և գործնական իրողության ճշշտ ընկալումը կարող է օգնել նվազագույնի հասցել վտանգները և մեծացնել այդ կոնց կողմից կարևոր և ճգրիտ տեղեկություններ հայտնելու հավանականությունը:

Սույն խորհուրդները օգտակար կարող են լինել գիտնականների, լրագորդների և ծառայություններ մատուցողների համար, ովքեր ծանոթ չեն կանաց թրաֆիկինգի հետ կապված իրավիճակին: Այստեղ հատուկ նշված չեն անշափահաս աղջիկների հետ հարցագրույցներին վերաբերող այլ ոիսկերն ու պարտավորությունները, սակայն սույն փաստաթղթի մեջ շարադրված սկզբունքների զգալի նասը կիրառելի է նաև այդ դեպքերում:

Սույն խորհուրդները մշակվել են կանաց նկատմամբ գործադրված բռնության և թրաֆիկինգի մասնագետների մի խմբի հետ խորհրդակցելով: Այդ մասնագետների մեջ նաև անմիջականորեն աշխատել է թրաֆիկինգի ենթարկված կանաց հետ:

Այս խորհուրդների հիմքում ընկած

են հետևյալ իրապարակումները. «Putting Women First: Ethical and Safety Recommendations for Research on Domestic Violence Against Women»<sup>2</sup>, «International Principles and Guidelines on Human Rights and Human Trafficking»<sup>3</sup>, «CIOMS International Ethical Guidelines for Biomedical Research Involving Human Subjects»<sup>4</sup>, «Human Rights Standards for the Treatment of Trafficked Persons»<sup>5</sup>, Ժուրնալիստների տարրեր միությունների վարքի կանոնները<sup>6</sup>, ինչպես նաև թրաֆիկինգի ենթարկված կամ սեռական այլ ոտնձգությունների զոհ դարձած կանաց հետ հարցագրույց վարելու ընթացակարգային ուղեցույցներն իրավապահ մարմինների համար<sup>7</sup>:

Այս խորհուրդները պետք է օգտագործվեն կրնկեն աշխատանքին վերաբերող և արդեն գոյություն ունեցող պրոֆեսիոնալ չափանիշների հետ մեկտեղ: Այստեղ առաջարկվում են թրաֆիկինգի իրավիճակում գտնվող կամ դրանից արդեն դուրս եկած կանաց հետ հարցագրույց վարելու 10 հիմնական սկզբունքներ: Ցուրաքանչյուր խնդիրի կարևորությունն առանձինառանձին պարզաբանվում է, ապա բերվում են դրանց վերաբերող գործնական օրինակներ: Այս խորհուրդները չպետք է ընկալվեն որպես թրաֆիկինգի ենթարկված կանաց հետ աշխատանքի ամբողջական և համապարփակ մի ուղեցույց<sup>8</sup>:

## ԹՐԱՖԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՍՏ ԲԱՐԴ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Թրաֆիկինգի ենթարկված կնոջ հետ հարցազրույցը կարող է տեղի ունենալ, եթե կինը ոեռ գտնվում է թրաֆիկինգի իրավիճակում, ծառայություններ մատուցող կազմակերպության խնամքի տակ, կամ էլ երբ նա արդեն անցյալում է թողել թրաֆիկինգի հետ կապված իր փորձառությունը և վերահստատվել է իր հարազատ համայնքում կամ որևէ նոր համայնքում։ Չնայած դեռ թրաֆիկինգի իրավիճակում գտնվող կանանց հետ հարցազրույցներն ավելի ռիսկային են, թրաֆիկինգի իրավիճակից դուրս եկած կանանց հետ հարցազրույցները նույնպես կապված են մի շարք ռիսկերի հետ, որոնք վերաբերում են այդ կանանց ֆիզիկական և հոգեկան բարորությանը։

### Դեռ թրաֆիկինգի իրավիճակում գտնվող կանայք հաճախ

- իրենց զգում են կարծես ծուղակի մեջ՝ առանց անվտանգ ելքի,
- աշխատում են ոչ պաշտոնական, հաճախ նաև ապօրինի կամ ստվերային ոլորտներում,
- ապօրինի են գտնվում այն երկրում, որտեղ հայտնվել են թրաֆիկինգի հետևանքով,
- սահմանափակ գիտելիքներ ունեն իրենց իրավունքների և դրանց պաշտպանության օրինական ճանապարհների մասին,
- սահմանափակ անձնական ազատություններ ունեն,
- անընդհատ տեղափոխվում են քաղաքից քաղաք կամ մի հաստատությունից մյուսը,
- հավանական է, որ ենթարկվել են ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնության և իրենց կամ իրենց ընտանիքի անդամների հասցեին այդպիսի բռնության սպառնալիքների,
- պաշտպանված չեն գործառուների կամ գործակալների կողմից կիրառվող բռնությունից, տուգանքներից և պատժից,
- տվյալ երկրում բնակվում են առանց օրինական կարգավիճակի, փաստաթղթերն իրենց մոտից վերցված են և

վախենում են արտաքսված լինելուց,

- թաքցնում են իրենց իսկական տարիքը, հատկապես եթե անչափահաս են,
- ունեն մեծ պարտքեր կամ նյութական այլ ծանր պարտավորություններ, որոնք կապված են կազմակերպված հանցագործության, կոռումպացված պետական պաշտոնյաների, ոստիկանների կամ զինվորականների հետ,
- ենթարկվում են երնիկական, սոցիալական և գենդերային խորականության, և
- ընդունում են ինքնապաշտպանական կեցվածք կամ ցուցաբերում են տրավմայի ու սրբեսի նշաններ՝ ժամանակի և տարածքի աղավաղված զգացողություն, որոշ իրադարձությունների մասին հիշողության կորուստ, ռիսկային կեցվածք կամ ռիսկի թերագնահատում<sup>9</sup>:

**Թրաֆիկինգի իրավիճակից արդեն դուրս եկած կանայք հաճախ**

- ունեն ննանատիպ մտահոգություններ, ինչպես թրաֆիկինգի իրավիճակում գտնվող կանայք,
- շարունակում են մտածել, որ թրաֆիկինգով գրաղվողները կամ նրանց հետ կապված մարդիկ հետևում են իրենց, ինչը երբեմն համապատասխանում է իրականությանը (Թրաֆիկինգի ենթարկվելիք կանանցից շատերը հավաքագրվում են տեղացիների, իսկ հաճախ նույնիսկ իրենց քաղաքի կամ գյուղի բնակչի կողմից):
- պարտքեր ունեն թրաֆիկինգով գրաղվողներին (ըստ թրաֆիկինգով գրաղվողների հաշվարկների),
- կարող են շարունակել անպաշտպան մնալ իրենց և/կամ իրենց ընտանիքի անդամների դեմ ուղղված վրիժառությունից,
- միայն ժամանակավոր կացության իրավունք ունեն տվյալ երկրում և վախեցած սպասում են արտաքսման,
- կարծում են, որ հասարակության կողմից խարանված են իրենց փորձառության և աշխատանքի պատճառով (ինչը հաճախ

### Արևելյան Եվրոպայից մի կին, որն աշխատել է որպես սպասավոր, ամեն օր ենթարկվել է հետոցային և հետանցքային բռնաբարության և սեռական այլ ստորացումների:

#### Տուն

Վերադառնալուց հետո նա շարունակել է տառապել այդպիսի վերաբերմունքի ֆիզիկական և հոգեբանական հետևանքներից, սական ամուսնուն երբեք չի պատմել այն մասին, թե իր հետ ինչ է կատարվել, քանի որ համոզված էր, որ ամուսինը կլքի նրան և իր երեխային, եթե ծշմարտությունն իմանա:

- այդպես էլ կա), և վախենում են, որ ընտանիքն ու համայնքի անդամները իրենց այլս չեն ընդունի, եթե անցյալի իրադարձությունները բացահայտվեն,
- իրավիճակից դուրս գալուց հետո ցուցաբերում են ծայրահեղ սրբեսային ռեակցիա և այլս չեն տիրապետում նախկինում ձեռք բերած վերապրելու հոգեբանական մեխանիզմներին,
  - գտնում են, որ նախկին փորձի մասին խոսելը հավասարազոր է նորից այդ ամենը վերապրելուն,
  - կարծում են, որ իրենց կողմից ստացված ծառայությունները կամ ներգաղթի կարգավիճակը կախված են իրենց հնագանդությունից, ինչի պատճառով համաձայնում են մասնակցել հարցագրույցի, որն այլ պարագաներում կմերժեն:

Այս պատճառներից ելնելով թրաֆիկինգի ենթակաված կանանց օգնություն ցույց տվող գործակալությունները հաճախ մերժում են իրենց խնամքի տակ գտնվող կանանց հետ հարցագրույց անցկացնելու՝ լրագրողների, գիտնականների և այլոց խնդրանքները:

Սակայն չպետք է ենթադրել, որ թրաֆիկինգի ենթակաված բոլոր կանայք են տրավմա տարել, իրենց համարում են զոհ, առում են իրենց վրա բռնացողներին կամ ցանկանում են փախչել և վերադառնալ տուն։ Շատ կանայք գտնվում են երկիմաստ պայմաններում, որոնցում նրանք կարող են հակասական և երկակի զգացնունքներ ունենալ։ Օրինակ՝

- Հազվադեպ չեն դեպքերը, երբ կանայք ինտիմ հարաբերությունների մեջ են թրաֆիկինգի ցանցում ընդգրկված կամ դրա հետ կապ ունեցող որևէ մեկի հետ, կամ հավատարմության, երախտիքի կամ գոնե կախվածության զգացում ունեն իրենց «գերության» իրավիճակի հետ կապված որևէ անձի հանդեպ։
- Շատ կանայք իրենց չեն համարում թրաֆիկինգի ենթակաված՝ ըստ ՄԱԿ-ի կամ այլ սահմանումների, և չեն ցանկանում, որ իրենց վերաբերվեն որպես զոհերի։

Նրանք կարող են իրենց փորձառությունը դիտարկել որպես իրենց կողմից կայացող վատ որոշման հետևանք, որի համար ստիպված են կատարել իրենց պայմանագրային պարտավորությունները։ Որոշ կանայք դա տեսմուն են որպես ժամանակավոր մի բան, որի ընթացքում նրանք նտադիր են բավարար գումարներ վաստակել՝ պարտքը մարելու, ինչպես նաև իրենց կամ տանը գտնվող ընտանիքը պահելու համար։

- Կանայք կարող են իրենց աշխատանքը չհամարել ստրկություն կամ շահագործուն, նրանք կարող են առարկել ոչ թե բուն աշխատանքին, այլ հարաբերություններին, որոնք նման են շահագործման։

Սույն բարդությունները կարող են դժվարացնել կնոջը դիմելու, վստահության մթնոլորտ ստեղծելու, համագործակցելու ցանկություն առաջացնելու, ծշմարտացի պատասխաններ ստանալու, ինչպես նաև նրա որոշումներն ու արձագանքները լիովին հասկանալու գործը։

Անվտանգության և էթիկայի առումով պատշաճ ընթացակարգերի ընդունումն օգտակար է և հարցվողին, և հարցազրույց վարողին։ Եթե կանանց մոտենում են նրանկատ ձևով և առանց դատելու, նրանցից շատերն օգուտ են քաղում իրենց կյանքի պատմությունը պատմելու հնարավորությունից։

Որքան ավելի շատ կինը զգա, որ հարգված է և որ նրա բարօրությունն առաջնային է, այնքան ավելի հավանական է, որ նա կիսի իր փորձառության ծզգրիս և առավել գաղտնի մանրանասները։ Թրաֆիկինգի ենթակաված կնոջ անվտանգության և բարօրության վրա ազդող գործոնները նույնն են, ինչ բացահայտման վրա ազդողները։

**Թրաֆիկինգի  
ենթակաված կնոջ  
անվտանգության և  
բարօրության վրա  
ազդող գործոնները  
նույնն են, ինչ  
բացահայտման վրա  
ազդողները։**

## ՏՐԱՖԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՍՏՏ ՀԵՏ ԵԹԻԿԱՅԻ ԵՎ ԱՍՎԱՆՎՈՒԹՅԱՍ ՊԱՐԱՆՁԵՐԸ ԲԱԿԱՐԱՐՈՂ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՏԱՍԸ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒԹՅՆԵՐԸ

### 1. ՉՎՆԱՍԵԼ

Յուրաքանչյուր կնոջն ու իրավիճակին վերաբերվեք այնպես, կարծես թե հնարավոր վտանգը չափազանց մեծ է այնքան ժամանակ, մինչև չունենաք հակառակի մասին վկայող ապացույցներ: Մի նախաձեռներ որևէ հարցազրույց, որը կարող է կնոջ դրությունը էլ ավելի վատթարացնել՝ թե՝ կարծամկետ, և թե՝ երկարաժամկետ կտրվածքով:

### 2. ԻՄԱՑԵՔ ՉԵՐ ՆՅՈՒԹԸ ԵՎ ԳՆԱՐԱՏԵՔ ՌԻՍԿԵՐԸ

Հարցազրույցը սկսելուց առաջ ծանոթացեք թրաֆիկինգի հետ կապված ռիսկերին և յուրաքանչյուր կնոջ գործին:

### 3. ՊԱՏՐԱՍՏԵՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ՄԻ ՏՎԵՔ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ԿԱՏԱՐԵԼ

Պատրաստ եղեք կնոջն իր լեզվով և տվյալ երկրի լեզվով (եթե դրանք տարբեր են) տեղեկություններ տրամադրել համապատասխան իրավաբանական, առողջապահական, սոցիալական և անվտանգության ծառայությունների և ապաստարանների մասին:

### 4. ԲԻՇ ԸՆՏՐԵՔ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՆ ՈՒ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ ԾԱՆՐՈՒԹԵՔ ԱՐԵՔ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ, ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ և ԱՅլ ՄԱՐԴԿԱՆԳ ՀԵՏ ԱԺԽԱՍՏԵԼՈՒ ԲՈԼՈՐ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, և ընտրելու ու ուսուցման պատշաճ մեթոդներ մշակեք:

### 5. ԱՊԱՐՈՎԵՔ ԱՆԱՍՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Ապահովեք հարցվողի անանունությունն ու գաղտնիությունը հարցազրույցի գործընթացի ողջ ընթացքում՝ նրան դիմելու պահից մինչև նրա գործի մանրամասները հրապարակելու ժամանակը:

### 6. ՍՏԱՑԵՔ ՀԱՐՑՎՈՂԻ ԿՇՈԱԴԱՏՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Յարկ է, որ յուրաքանչյուր հարցվող հստակորեն ըմբռնի հարցազրույցի բովանդակությունն ու նպատակը, տրամադրվող տեղեկությունների օգտագործման նպատակները, հարցերին պատասխանելուց հրաժարվելու, հարցազրույցը ցանկացած ժամանակ դադարեցնելու, ինչպես նաև հարցազրույցի ընթացքում տրամադրված տեղեկությունների օգտագործման եղանակների սահմանափակման իր իրավունքները:

### 7. ԼՍԵՑԵՔ ԵՎ ՀԱՐԳԵՔ ԻՐ ԻՐԱՎԻճԱԿԻ ԵՎ ԻՐԵՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՅՈՒՐԱԹԱՆՉՅՈՒՐ ԿՆՈԶ ԳՆԱՐԱՏԱԿԱՆԸ

Գիտակցեք, որ յուրաքանչյուր կին իր ուրույն մտահոգություններն ունի, և որ իր կողմից այդ մտահոգությունների ըմբռնումը կարող է տարբերվել ուրիշների գնահատականից:

### 8. ԿՆՈԶԸ ԿՐԿՆԱԿԻ ՏՐԱՎՄԱՅԻ ՄԻ՛ ԵՆԹԱՐԿԵՔ

Ձերծ մնացեք այնպիսի հարցերից, որոնք կարող են հանգեցնել զգացմունքային լարվածություն առաջացնող պատասխանների: Պատրաստ եղեք կնոջը սփոփելու և նրա ուժը շեշտադրելու:

### 9. ՊԱՏՐԱՍՏ ԵՂԵՔ ՄԻՋԱՄՏԵԼՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻճԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ

Պատրաստ եղեք արձագանքելու, եթե կինը պնդում է, որ իրեն վերահաս վտանգ է սպառնում:

### 10. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՀԱՎԱՔԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստացած տեղեկություններն օգտագործեք այնպես, որ դրանք օգուտ բերեն տվյալ կնոջը կամ նպաստեն թրաֆիկինգի ենթարկված կանանց համար օգտակար քաղաքականության մշակմանը:

## 1. ՉՎՆԱՍԵ՛Լ

Յուրաքանչյուր կնոջն ու իրավիճակին վերաբերվեք այնպես, կարծես թե հնարավոր վտանգը չափազանց մեծ է այնքան ժամանակ, մինչև չունենաք հակառակի մասին վկայող ապացույցներ: Մի նախաձեռնեք որևէ հարցազրույց, որը կարող է կնոջ դրությունը էլ ավելի վատքարացնել՝ թե՛ կարծաժամկետ, և թե՛ երկարաժամկետ կտրվածքով:

### 1.1 ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ

Եթիկայի պահանջներից բխող առաջին կարևոր սկզբունքը «չվնասե՛լ» սկզբունքն է: Դաշվի առնելով թրաֆիկինգի հետ կապված ծայրահեղ ռիսկերը, այս հիմնական սկզբունքի կարևորությունը չի կարելի թերագութատել:

#### ՈՒԽԱԿԵՐ

Ներ թրաֆիկինգի իրավիճակում գտնվող, այդպիսի իրավիճակներից դուրս եկող կամ արդեն դուրս եկած կանայք, ինչպես նաև նրանց ազգականները կամ ընկերները պաշտպանված չեն վնասից: Կնոջը սպառնացող ֆիզիկական վտանգի և հոգեբանական վնասի աստիճանն ու տևողությունը ոչ միշտ է ակնհայտ: Որոշ դեպքերում հարցազրույց վարողը կարող է չնկատել ռիսկերը: Որոշ դեպքերում էլ կինն ինքը կարող է չնկատել իրեն սպառնացող վտանգը:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Եթե գոյություն ունի ռիսկ, որ որևէ կնոջից հարցազրույց խնդրելը կամ բուն հարցազրույցը կարող է վնասել տվյալ կնոջը, սպառնում է նրա անվտանգությանը կամ վտանգում է նրա հոգեկան առողջությունը, ապա հարցազրույցը չպետք է անցկացվի:

Հարցազրույց նախաձեռնելուց առաջ հարցազրույց վարողը պետք է նախ գնահատի ռիսկերը: Պետք է հաշվի առնվեն հետևյալ խնդիրները: Կնոջը դիմելը ինչպե՞ս կընկալի ուրիշների՝ թրաֆիկինգով գրադարձների, մյուս կանանց, ազգականների կամ համայնքի կողմից, արդյո՞ք որևէ մեկը, ով առարկում է հարցազրույցին, կարող է հնանալ դրա նասին, և արդյո՞ք տվյալ կինը պարտադրված է գգում հարցազրույց տալու: Կարևոր է գնահատել, թե կարող է արդյոք կնոջ հետ հանդիպումը բռնության, ներգաղթի հարցերի հետ կապված խնդիրների, աշխատավարձի կորստի, աշխատանքի վայրում տուգանքների և շահագործման պայմաններում տարածված այլ շինծու տույժերի պատճառ դառնալ:

Պետք է անել ամեն ինչ կնոջ հոգեկան վիճակը և հարցազրույցի հնարավոր ազդեցությունը գնահատելու համար: Շատ հաճախ կանայք, հատկապես վերջերս փախածները, գտնվում են ենոցինալ ճգնաժամի վիճակում: Նման վիճակում գտնվող կնոջից հարցազրույց վերցնել պետք չէ: Շատ կարևոր է, որ հարցազրույցի խնդրանքով դիմելու պահին կինը լինի լիակատար ինքնատիրապետման վիճակում և որ բուն հարցազրույցի ընթացքում նա վերահսկի հարցազրույցի իրավիճակը:

Կնոջը դիմելուց անմիջապես հետո նրա երկյուղներն ու մտահոգությունները պետք է քննարկվեն համակարգված ձևով (այսինքն, քննարկումը պետք է լինի լուրջ, և ոչ թե ընդամենը: «ոչի՞նչ, որ հարցազրույց վերցնեմ ձեզանից»):

Կնոջ՝ սեփական անվտանգության գնահատականը առաջնային կարևորություն ունի, սակայն որոշ իրավիճակներում նա կարող է չպատկերացնել, թե հարցազրույց տալը ինչպիսի խնդիրներ կարող է առաջացնել:

**Օտար երկրի բանտում գտնվող մի կին, որը հանդիպել էր մի 3Կ-ի հետ և համաձայնել էր ցուցմունքներ տալ իրեն թրաֆիկինգի ենթարկածների դեմ, հանդիպումից հետո մի գործույուն է գտնում իր բանտախցում, որը սպառնալիքներ է պարունակում իր և իր հարազատ երկրում մնացած երեխաների հասցեին:**

#### ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԵՐՎՈՂ ՀԱՐԾԵՐԻ ՕՐԻՆԱԿՆԵՐ՝

**Չ:** Որևէ մտահոգություն ունե՞ք այս հարցազրույցի հետ կապված:

**Չ:** Կարծո՞ւ՞մ եք արդյոք, որ իօծ հետ խոսելը կարող է խնդիր առաջացնել, ասենք, ձեզ թրաֆիկինգի ենթարկած մարդու, ազգականների, ընկերների կամ ձեզ օգնող որևէ մեկի հետ:

**Չ:** Երբեմն գրուցե՞լ եք որևէ այլ հարցազրույց վարողի հետ: Ինչպե՞ս է անցել այդ հարցազրույցը:

**Չ:** Յարմա՞ր եք գտնում այս պահը և վայրը ձեր փորձի մասին խոսելու համար: Եթե ոչ, ապա ե՞րբ և որտե՞ղ ավելի հարմար կլինի:

## Կարևոր է աշխատել պրոֆեսիոնալ և փորձառու տեղական կազմակերպությունների կամ անհատների հետ:

**Թրաֆիկինգի**  
ենթարկված կանանց հետ  
հարցազրույց վարելուց առաջ  
օգտակար է խորհրդակցել  
հետևյալ տեսակի խմբերի հետ  
ու ուսումնաժիրել հետևյալ  
գործականությունը՝

- **Միգրացիայի,**  
փախստականների, ապաստան  
փնտրողների կենտրոններ,  
ներգաղթի ժառանգություններ,  
միգրանտների և  
փախստականների համար  
իրավաբանական  
ծառայություններ ու  
սոցիալական աշխատողներ,
- **Միգրանտների համար**  
աշխատանքի իրավունքի  
կենտրոններ,
- **Սերսի ինդուստրիայի**  
աշխատողների խմբեր ու  
օգնություն  
(առողջապահություն,  
իրավունքներ, սերսի  
ինդուստրիայի աշխատողների  
արհմիություններ),
- **Բռնություն կանանց դեմ,**  
կանանց իրավունքների խմբեր,  
ընտանեկան բռնության և  
բռնաբարության գործերի  
կենտրոններ,  
ապաստարաններ,  
խորհրդատուններ ու  
հոգեբաններ,
- **Մարդու իրավունքների խմբեր,**  
Մասնագետներ  
խոշտանգումների և բռնության  
գծով,
- **Իրավապահ մարմիններ,**  
• **Էթնիկական խմբեր կամ  
մշակութային կենտրոններ և  
գործականություններ,**
- **Միջազգային**  
կազմակերպություններ  
(Միջազգային  
համաշխարհային  
կազմակերպություն, ՄԱԿ-ի  
Մարդու իրավունքների  
հանձնականարի գրասենյակ,  
Աշխատանքի միջազգային  
կազմակերպություն),
- **Միգրացիայի, թրաֆիկինգի,**  
աշխատանքի և կանանց  
իրավունքներով զբաղվող  
գիտական  
հաստատություններ:

Եթիկայի կանոնները պահանջում են, որ, նույնիսկ եթե կինը համաձայն է հարցազրույցին, այն չպետք է տեղի ունենա, եթե հարցազրույց վարողը կանխատեսում է հնարավոր բացասական հետևանքներ:

## 2. ԻՄԱՑԵՔ ԶԵՐ ՆՅՈՒԹԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԵՔ ՌԻՍԿԵՐԸ

Հարցազրույցը սկսելուց առաջ ծանոթացեք  
թրաֆիկինգի հետ կապված ռիսկերին և յուրաքանչյուր  
կնոջ գործին:

### 2.1 ՀՆԱՐՎՎՈՐ ՌԻՍԿԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հարցազրույցի գործընթացի յուրաքանչյուր փուլ՝ սկսած կնոջն առաջին անգամ դիմելուց մինչև տեղեկությունների հրապարակումը, կապված է որոշակի ռիսկերի հետ: Հարցազրույց նախաձեռնելուց առաջ ռիսկերին ծանոթանալու և հարցազրույցի ողջ ընթացքում կնոջ բարօրությունն ապահովելու ռազմավարություն մշակելու համար հարկ է մանրանասն ուսումնասիրել նյութը և իրավիճակը տվյալ երկրում, և, ինչը ամենակարևոր է, աշխատել պրոֆեսիոնալ և փորձառու տեղական կազմակերպությունների կամ անհատների հետ:

#### Ռիսկեր

**Վրիժառություն գործատունների, թրաֆիկինգով զբաղվողների, կավատների և իրավապահ մարմինների կողմից**

Քանի որ թրաֆիկինգի ասաելուններից շատերը քրեորդն պատճելի են (օրինակ՝ ներգաղթի կանոնների խախտումներ, ապօրինի աշխատանքային պայմաններ, անչափահաս տարիքի հետ կապված խնդիրներ, պարտի համար ճորտություն, բռնություն, առևանգում), թրաֆիկինգով զբաղվողները չեն ցանկանում, որ կանայք խստեն օտարների հետ: Կնոջ վրա հսկողություն ունեցողները կարող են վախեցնել նրան կամ ֆիզիկական պատիճ կիրառել (ծեծ, բռնաբարություն, ազատազրկում), կամ կարող են նրան պատճել ֆինանսապես (սուլանքներ՝ անհնազանդության համար կամ պարտի ավելացում), որպեսզի նա այլևս օտարների հետ չչփախ: Նրանք կարող են նաև ավելացնել աշխատանքային ժամերը կամ կնոջը զրկել որոշ «արտոնություններից», ինչպիսիք են ազատ ժամանակը, քունը, սնունդը կամ հարմարությունները: Նման չարաշահումներն ու պատիճները ոչ միայն պատժում են կարգը խախտողին, այլ նաև ծառայում են որպես զգուշացում մյուս կանանց համար:

Չպետք է ենթարկել, որ այլևս չաշխատող կամ օտար երկրում չգտնվող կինն ապահով է վրիժառությունից: Շատ հաճախ թրաֆիկինգով զբաղվող գործակալները հեշտությամբ կարող են անձնական տեղեկություններ քաղել կնոջ, նրա տան, ազգականների ու ընկերների մասին: Նույնիսկ «անմեղ» մի հարցազրույց կարող է վտանգել կնոջը և անհնար դարձնել նրա վերադարձը հայրենիք կամ տանը մնալը:

#### Վրիժառություն հարցվողի ազգականների կամ երեխանների դեմ

Կանանց ենթարկելու ո հսկողության տակ պահելու համար գործակալների ու գործատունների կողմից կանանց ազգականներին և, հատկապես, երեխաններին սպառնալով չափազանց տարածված երևույթ է:

#### Անպատվություն ու մերժում, կամ ազգականների ու հարևանների կողմից պատժում

Կինը ոչ միայն մտահոգվում է իր ազգականների անվտանգության համար, այլ նաև վախենում է, թե իր ծնողները, ամուսինն ու նյուս ազգականները ինչ կմտածեն, եթե ինանան, որ նա զբաղվել է մարմնավաճառությամբ կամ ենթարկվել է սեռական ոտնձգությունների: Հազվադեպ չեն դեպքեր, եթե ծնողները, քույրերը, եղբայրները կամ ամուսինն այդ կնոջը մեղադրում, ֆի-

զիկապես պատժում կամ տնից վտարում են՝ նրա հետ տեղի ունեցածի պատճառով։ Օրինակ՝ հարցազրոյց տալու խնդրանքով կնոշն իր տան անզգուշորեն դիմելը կարող է անուղղելի վնաս հասցնել նրա ընտանեկան հարաբերություններին։ Կնոշը մտահոգում է նաև այն, որ ազգականները կարող են իմանալ, որ նա չի վաստակել այնքան, որքան նախատեսվում էր, կամ դիմել է փախուստի՝ առանց պարտքը մարելու, ինչը զայրույթ ու պարսպավանք է առաջացնում։

### **Օտարերկրյա պաշտոնյաների կողմից հայտնաբերում**

Կանանցից շատերը ճանապարհորդում են ապօրինի, նրանց փաստաթղթերին տիրանում են թրաֆիկինգով գրաղվողները և նրանք հավաստի տեղեկություններ չունեն իրենց իրավական կարգավիճակի մասին։ Վախենալով ձերքակալությունից կամ արտաքսումից՝ նրանք դժկանությամբ են շփում օտարների հետ։ Իրենց երկրում կոռումպացված պաշտոնյաների հետ շփնան փորձը շատ կանանց մոտ անվտահություն է առաջացնում այլ երկրների ոստիկանների և այլ պաշտոնյաների հանդեպ։ Շատ երկրներում, ուր մարմնավաճառությունն արգելված է, սերքի ինդուստրիայում աշխատող կանայք արդարացնություն վախենում են ձերքակալված լինելուց։ Այս մտավախություններն էլ ավելի են սաստկանում թրաֆիկինգով գրաղվողների գգուշացումներից առ այն, որ իշխանությունները մեղսակցում են իրենց, որ կանանց կվնասեն, կձերքակալեն, չեն թողնի, որ երբեւ տուն վերադառնան, կամ էլ տուն կուղարկեն իրենց կամքին հակառակ։ Որոշ վայրերում, որտեղ իշխանություններն իրոք մեղսակցում են թրաֆիկինգով գրաղվողներին, իշխանությունները ձերքակալում են կանանց՝ նրանց վաստակած գումարները կորցելու, ապա այդ կանանց վերավաճառելու կամ կրկին թրաֆիկինգի ենթակելու նպատակով։

### **Վրիժառություն հայրենի երկրի իշխանությունների կողմից**

Կնոջ հայրենի երկրի, ուսումնական նրա հայրենի գյուղի որոշ պաշտոնյաներ կարող են մեղսակից լինել թրաֆիկինգի գործընթացին։ Կոռումպացված պաշտոնյաները կարող են ապել կնոջ հարազատ երկրում կամ աշխատել արտասահմանում գտնվող դեսպանություններում ու հյուպատոսարամներում։

### **Մատնություն գործընկերների, հարևանների կամ համայնքի անդամների կողմից**

Չի կարելի ենթադրել, թե նույն իրավիճակում գտնվող կամ նույն համայնքից եկած կանայք վստահում են միմյանց։ Չնայած միասին ապրող կամ աշխատող կանայք կարող են մտերիմ ընկերներ դառնալ, լինում են նաև դեպքեր, երբ կանայք իրարից նեղացած են, կամ էլ ֆինանսական օգուտ, հարգանք կամ լրացուցիչ արտոնություններ են ստանում գործադուներից, թրաֆիկինգով գրաղվողներից կամ այլ մարդկանցից։ Մյուս կանանց մասին վարկաբեկող տեղեկություններ հայտնելու դիմաց։ Նմանապես, նույն ապաստանում ապրող կանայք կարող են թշնամության կամ վերժմնդրության գրացումներ ունենալ միմյանց նկատմամբ և տեղեկություններն օգտագործել կողդինին վնաս հասցնելու համար։ Լինում են նաև դեպքեր, երբ կանայք կապի մեջ են մտնում թրաֆիկինգով գրաղվողների հետ և վերջիններին կարևոր տեղեկություններ են հայտնում այլ կանանց մասին։ Օտարների հետ գրուցելու պահին թրաֆիկինգի ցանցի հետ կապված մարդկանց կողմից մկանված լինելու վտանգը սպառնում է նաև արդեն տուն վերադառնած կանանց։

### **Ստեր տարիքի մասին**

Շատ անգամ անչափահաս աղջիկները ստում են իրենց տարիքի մասին։ Ի դեպ, դա հաճախ տեղի է ունենում ինչն թրաֆիկինգով գրաղվողների հրահանգով։ Անչափահասների հետ հարցազրոյց վարելը առաջ է քաշում լրացուցիչ երիկական խնդիրներ, իսկ որոշ վայրերում՝ նաև հարցազրոյց վարողի կողմից օրենքի առաջ որոշ պարտականություններ։ Հարցազրոյց վարողները պետք է ծանոթանան տեղի օրենսդրության այն պահանջներին, որոնք կապված են անչափահասների դեմ ուսնձգությունների մասին ահազանգելու անհրաժեշտության հետ։ Լավ կլիներ նաև պարզել, թե անչափահասներին օգնելու համար ինչպիսի ռեսուլսներ և ծառայություններ կան։

**Թրաֆիկինգի ենթարկված կանայք հաճախ ականատես են լինում, թե իրենց թրաֆիկինգի ենթարկողներն ինչպես են կաշառում տեղի պաշտոնյաներին։ Զոհերից մեկը պատմում է, թե ինքն ու իրենց թրաֆիկինգի ենթարկողը ինչպես են սահմանն անցել՝ ուստիկանի օգնությամբ և ուստիկանության մերենայով։**

**Երբ թրաֆիկինգի ենթարկված կանայք վերադառնակում էին աֆրիկյան մի պետության իշխանություններին, ընդունված էր, որ նրանց դեմքերը ցույց էին տալիս հեռուստատեսությամբ՝ որպես հանրությանը թրաֆիկինգի մասին գուշացնելու կանխարգելիչ ռազմավարության մի մաս։ Դրա արդյունքում թրաֆիկինգի ենթարկված շատ կանայք խայտառակվում էին և մերժվում սեփական ընտանիքի և համայնքի կողմից։**

**Մերձավոր Արևելքի երկրներից մեկում, երեք արևելակրոպացի կանայք փախչում են մի ակումբից և օգնություն հայցում տեղի իշխանություններից։ Ուստիկանություննում նրանց ասում են, որ ոչնչով չեն կարող օգնել և ուղարկում են ավտոկայան՝ քաղաքից հեռանալու առաջարկով։ Երբ կանայք հասնում են ավտոկայան, իրենց դիմավորում են իրենց թրաֆիկինգի ենթարկածները։**

**15-ամյա ռումինացի մի աղջիկ թրաֆիկինգի է Ենթարկվում ալբանական բանտից, որտեղ նա պահվում էր իտալական կեղծ անձնագիր ունենալու համար: Որոշ ժամանակ իր ընկերկավատի համար աշխատելուց հետո նա դիմում է փախուստի և աշխատանքի անցնում քաղաքի մեկ այլ թաղամասում գտնվող սաունայում: Նրան սկսում են փնտրել: Ալբանացի ընկերոջը «ծառայություն մատուցելու» նպատակով այդ աղջկա հետ աշխատող կանանցից մեկը մատում է նրան: Ռումինացի աղջկան առևանգում են օրը ցերեկով՝ իր գործընկերների աչքի առաջ:**

**Հավատարմություն գործակալների, գործատուների, կավատների/ընկերների ու ցանցի մեջ ընդգրկվածների հանդեպ և կախվածություն նրանցից**

Որոշ կանայք հավատարիմ հարաբերություններ ունեն գործակալների կամ գործատուների հետ, ովքեր կարող են նաև լինել նրանց ընկերները, ամուսինները կամ այլ ազգականները: Դրսի մարդու համար այդպիսի զգացմունքները կարող են անբացարելի թվական, եթե հաշվի չառնել հետևողական մեկուսացումն ու կախվածությունը, որոնք կամանց նկատմամբ հարկադրության կարևոր տարրերից են: Շատ դեպքերում բռնության կամ դաժանություններին հաջորդում են բարության ու գրասրտության նշաններ: Այդպիսի հարաբերությունները կարող են շփոթեցնող լինել: Կինը կարող է կարծել, որ նրան լավ են նայում, իսկ ուժի այդպիսի անհավասարակշռությունը նրան կարող է հանգել, որ ապագայի և կյանքի համար միակ ելքն ընկած է նրան շահագործողի կամ նրա վրա բռնացողի ձեռքերում:

## 2.2 ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑԻ ԳՈՐԾԵՆԹԱՑԻ ՓՈՒԼԵՐԸ. ՈՒՍԿԵՐ ԵՎ ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐ

Հարցագրույցի գործընթացի յուրաքանչյուր փուլ կարող է հարցվողի համար ռիսկերի հետ կապված լինել: Զարդ է այդ ռիսկերը ճանաչել ու գնահատել, և համապատասխան միջոցներ ձեռնարկել անվտանգությունն ապահովելու համար:

### Փուլ առաջին. սկզբնական կոնտակտը

#### Ոիսկեր

Թրաֆիկինգի իրավիճակում գտնվող որևէ կնոջ մոտենալը, նրա մասին հարցնելը կամ տվյալ կնոջ հետ հանդիպում խնդրելը կարող է վտանգել նրան՝ կասկածներ հարուցելով նրա հավատարմության կամ մտադրությունների վերաբերյալ: Կանայք հազվադեպ են մնում առանց հսկողության: Նույնիսկ եթե կինը մենակ է, իրականում նրան հետևում են (օրինակ՝ տեսնելու կամ լսելու համար հարմար հեռավորության վրա գտնվող կավատը կամ գործատուն, կամ թաքնված տեսախցիկը):

Նմանապես, որևէ գյուղ մտնելը և կնոջ մոտենալը, կամ արտագաղթած կնոջ ընտանիքին այցելելը (թե այն դեպքում, եթե կինը հաստատ ենթարկվել է թրաֆիկինգի, և թե նաև նրան կասկածների առկայության դեպքում), նույնպես կարող է խնդիրներ առաջացնել այդ կնոջ և նրա ընտանիքի համար:

#### Խորհուրդներ

- Թրաֆիկինգի ենթարկված կնոջ հետ կապ հաստատելու ամենաանվտանգ ճանապարհը անմիջականորեն նրա հետ խոսելն է, եթե նա արդեն միանշանակորեն դրւու է եկել թրաֆիկինգի իրավիճակից: Հաճախ կապ հաստատելու ամենաարդյունավետ ու ապահով միջոցը նրան ծանոթ ու նրա վստահությունը վայելող տեղական կազմակերպություններն են, ինչպիսիք են սոցիալական ծառայության խմբերն ու ապաստանները:
- Որքան շատ ժամանակ է ընկած թրաֆիկինգով գրավվողների հետ կնոջ վերջին շփումների և հարցագրույցի միջև, այնքան ավելի հավանական է, որ նա կրացահայտի իր փորձառության մանրամասները և այդ անելիս ավելի ապահով կզգա իրեն:
- Եթե անհրաժեշտ է կնոջ հետ կապվել այն ժամանակ, եթե նա դեռ հստակ կապեր ունի գործակալների կամ գործատուի հետ, ապա լավ կլինի գտնել տեղական կազմակերպություններ՝ առողջապահական կամ սոցիալական ծառայություններ, որոնց նա վստահու է: Եթե վստահելի տեղական կազմակերպությունների միջոցով կապ հաստատելն անհնար է, ապա անհրաժեշտ է երկար ժամանակ դիտարկել և ուսումնասիրել կնոջ պայմանները (այսինքն՝ ո՞վ է նրան

ուղեկցում, ո՞վ է նրան հետևում և այլն), որպեսզի հնարավոր լինի գնահատել նրա հետ կապի մեջ նտնելուն առնչվող ռիսկերը:

Յարկ է նշել, որ այն երկրներում, որ սեքսի ինդուստրիայի վրա աչք են փակում կամ այն հարդուրժվում է, կամ որտեղ ոստիկաններին, պետական պաշտոնյաներին և այլց կանոնավոր ծևով կաշառում են՝ պատասխանատվությունից խուսափելու համար, հասարակաց տների տերերը, կավատներն ու հսկողություն իրականացնող մարդիկ կարող են բոլորովին չառարկել հարցագրույցին: Սա հատկապես տարածված է այն դեպքերում, երբ հսկողություն իրականացնողները կարծում են, թե հարցագրույցները կարող են օգտակար լինել կանանց համար, ինչն իր հերթին օգուտ կրերի նաև իրենց: Խոսքն անվճար պահպանակների, առողջապահական տեղեկությունների, դեղորայքի և բուժմասարկման մասին է: Որոշ երկրներում թրաֆիկինգի ենթարկված կամ ճորտության մեջ գտնվող կանանց հետ հարցագրույցները դարձել են սովորական ու անվտանգ: Երբեմն էլ «գործատուները» թույլ են տալիս, որ կանայք հարցագրույց տան միայն այն պարզ պատճառով, որ վստահ են, որ վերջիններս չեն համարձակվի անկեղծ լինել: Այդպիսի պայմաններում հարցագրույց անցկացնելու նկատմամբ չափազանց լավատեսորեն տրամադրվելուց առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե հարցեր տվող օտար մարդու ներկայությունն ինչպես կընկալվի:

Կնոքն ավելորդ վտանգի չենթարկելու համար հարցագրույց վարողը նրան կարող է ասել՝ եթե որևէ մեկը հարցնի, հարցագրույցը ավելի չեղոք թեմայով է, ասենք՝ «առողջության» մասին: Դա կնոքը թույլ կտա այդ գրույցը բացատրել ուրիշներին՝ առանց որևէ վտանգի: Սակայն, հենց որ հարցվողն ու հարցագրույց վարողը մնում են մենակ, հարցվողի կշռադաշտված համաձայնությունը ստանալու համար նա պարտադիր պետք է մանրամասն տեղեկացվի հարցագրույցի իրական թեմայի մասին (տես՝ «6. Ստացեք հարցվողի կշռադաշտված համաձայնությունը»):

Ազատազրկման վայրերում գտնվող կնոք հետ հարցագրույց խնդրելիս չի կարելի ենթադրել, թե նա անպայման պաշտպանված է իշխանությունների, այլ կալանավորների կամ թրաֆիկինգով զբաղվողների վրիժառությունից: Նույնիսկ եթե հարցագրույցները հնարավոր է կազմակերպել մեկուսի վայրում, նման պայմանների թերություններից մեկն այն է, որ կինը կարող է իրեն ազատ չգտալ, իսկ հարցագրույցից հետո նրան կարող են ներել կամ ստիպել, որ նա խոստովանի, թե ինչ է ասել:

## Փուլ երկրորդ. հարցագրույցի ժամանակի և վայրի ընտրությունը

### ՈՒՍԿԵՐ

Եթե թրաֆիկինգի իրավճակում գտնվող կինը հանդիպում է օտար մարդու հետ, նրան կարող են հետևել կամ ականց դմել: Որոշ դեպքերում այդ կանանց աշխատավայրերում և բնակարաններում տեսախցիկներ են տեղադրված: Նույնիսկ կանայք, ում անընդհատ չեն հետևում, դժկամությամբ են խոսում օտարների հետ, որովհետև վախենում են, որ իրենց ասածը կարող է հայտնի դառնալ և օգտագործվել իրենց կամ իրենց ազգականների դեմ:

Նմանապես, ապաստանում կամ իր տանը գտնվող կինը կարող է իրավացիորեն կարծել, որ իր հետ բնակվողները, ընտանիքի անդամները, հարևանները կամ ուրիշները կարող են լսել իր կողմից հայտնած գաղտնի կամ իրեն վարկաբեկող տեղեկությունները:

### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Հարցագրույցները պետք է անցկացվեն ապահով և լրիվ մեկուսացված պայմաններում, առանց կողմնակի անձանց ներկայության: Հաճախ ամե-

**Հարցագրույց վարողը գնում է մի ակումբ և հանդիպում է դրա տիրոջը, որը պնդում է, թե իր մոտ աշխատող բոլոր կանայք աշխատում են սեփական կամքով և լավ են վաստակում: Նա ինքն է ընտրում կանանց՝ հարցագրույց տալու համար և հարցագրույցի ողջ ընթացքում նստում է բավականին մոտ: Իհարկե զարմանալի չէ, որ այդ կանայք միաձայն հաստատում են նրա բոլոր պնդումները:**

**Արևմտյան Եվրոպայի ակումբներից մեկը վերջերս ժամանած մի երիտասարդ կին սարսափահար և թշվառ վիճակում դիմում է ոստիկանություն, որպեսզի նրան փրկեն: Ոստիկանները ռեյդի են ենթարկում այդ հասարակաց տունը և ձերբակալում այնտեղ աշխատող բոլոր կանայք զարմանալի մեքնայի մեջ հավաքված մյուս կանայք զայրանում են այդ երիտասարդ կնոջ վրա՝ իրենց պարտքերը մարելու միջոցից զրկելու համար և ծեծի ենթարկում նրան:**

նաանվտանգ տարբերակներն են հասարակական կազմակերպություններն ու սոցիալական օգնության ծառայությունները: Հարցազրույցները չպետք է անցկացվեն վայերերում, որտեղ անընդհատ ինչ-որ մարդիկ են ներս ու դրւս անում կամ որտեղ հարցազրույցը պարբերաբար ընդհատվում է, ինչը թույլ չի տալիս, որ հարցվողն իրեն ազատ զգա: Երեխսաների ներկայությամբ անցկացվող հարցազրույցները կարող են անհանգստություն և տրավնա պատճառել, իսկ կնոջ խոսքերը հետո կարող են կրկնվել ուրիշների ներկայությամբ:

Հարցազրույցից առաջ և ընթացքում կինը պետք է ազատ հնարավորություն ունենա հարցազրույցը հետաձգելու կամ այն տեղափոխելու իրեն ավելի հարմար և ապահով օր ու վայր:

Հարցազրույցի համար քիչ ժամանակ նախատեսելու իրատեսական չէ և կարող է հարցազրույց վարողին ստիպել դիմել անհարկի ռիսկերի: Նմանապես, հարցազրույցները չպետք է շատ երկար տևեն և էմոցիոնալ առումով չափազանց հոգմեցուցիչ լինեն: Որքան կինն իրեն ավելի ազատ զգա, այնքան ավելի հավանական է, որ նա արժեքավոր տեղեկություններ կիրառողի: Հարցազրույցը սկսելուց առաջ լավ կլիներ պարզել, թե կինը որքան ժամանակ ունի իր տրամադրության տակ, քանի որ գործատուների կամ բրաֆիկիննագով գրաղվողների հսկողության տակ գտնվող կանայք հաճախ կեղծ պատճառներ են գտնում իրենց բացակայության համար, իսկ ուշացումները կարող են խնդիրներ առաջացնել:

## Փուլ երրորդ. հարցազրույցի ընթացքը

**Պատրաստ եղեք լսելու, մի կողմ դնելով բոլոր նախապաշարմունքները**

### Ոիսկեր

Եթե հարցազրույց վարողն ունենա նապապաշարմունքներ կամ զգացողություններ կնոջ փորձառության, նրա հետ կատարվածի հանդեպ արձագանքի կամ բնավորության մասին, ապա իրենց կվրիպեն մի շարք կարևոր տեղեկություններ և նա չի նկատի յուրաքանչյուր կնոջ փորձառության ուրույն բնույթը:

### Խորհուրդներ

Հարցազրույցից առաջ կարևոր է հարցեր նախապատրաստել մտքում, սակայն կնոջ փորձառության մասին առավել ծգրիտ տեղեկություններ ստանալու համար ավելի հարմար են խիստ կառուցվածք չունեցող և հրավիճակին արձագանքող հարցազրույցները: Դա կախված է հարցազրույց վարողի բացությունից, ինչպես նաև լսելու ու թարգմանելու կարողությունից: Օրինակ՝ հարցազրույց վարողը պետք է ընթառում ու հոգատարություն ցուցաբերի, սակայն խորահարության կամ կարեկցանքի գրացումները կարող են տեղին չլինել և չընդունվել, քանի որ շատ կանայք չեն ուզում, որ նրանց վերաբերվեն որպես զոհերի:

**Կարողացեք ճանաչել կնոջ անհանգստության և անապահով զգալու նշանները**

### Ոիսկեր

Հարցազրույցի ընթացքում իրադարձությունները կարող են կտրուկ փոփոխվել: Այդ փոփոխությունները կարող են ֆիզիկական կամ հոգեբանական վտանգ հանդիսանալ կնոջ համար:

**Նույնիսկ եթե հարցազրույցի սկզբից ստեղծված պայմաններն ընդունելի են, հարցվողը կարող է հարցազրույցի ցանկացած պահին իրեն անա-**

**Ոստիկանի կողմից  
բռնաբարված մի կնոջ,  
որը բրաֆիկիննագի է  
ենթարկվել, ստիպում են  
ոստիկանությունում  
ցուցումներ տալ բաց  
դռներով մի սենյակում,  
որի կողքով անընդհատ  
տարբեր մարդիկ են  
գնումգալիս:**

**Հարցազրույցի ողջ  
ընթացքում նա  
վախենում է, որ իրեն  
բռնաբարող ոստիկանը  
կարող է ճանաչել իրեն:**

պահով կամ անհանգիստ զգալ: Կարևոր է ճանաչել դրա նշանները, որովհետև հնարավոր է, որ հարցազրույցի իրավիճակը վտանգավոր դարձած լինի, և որովհետև կնոջ անհանգստությունը հաճախ նշանակում է, որ նա չի ցանկանում կամ չի կարող անկեղծ լինել:

Հարցազրույցի բնույթը կարող են փոխել հետևալ իրադարձությունները կամ քննարկման նյութերը՝

- ինչ-որ նեկը ներս է մտնում կամ անցնում է սենյակի կողքով,
- հարցեր կնոջ ընտանիքի կամ տարիքի մասին, կոնկրետ անուններ կամ հասցեներ նշելու խնդրանքներ և այլ նմանատիպ հարցեր, որոնք կարող են կասկածներ առաջացնել հարցազրույց վարողի բուն նպատակների վերաբերյալ,
- հարցազրույց վարողի կողմից վստահության կորուստ կամ անհանգստության նշաններ:

## Խորհուրդներ

Կարևոր է կարողանալ նկատել այն նշանները, որոնք ցույց են տալիս, որ հարցվողը այլևս անհանգիստ է կամ ցանկանում է դադարեցնել քննարկումը: Եթե նրա վարքագիծը կամ հարցերին պատասխանելու ձևը նկատելիորեն փոխվել են, ապա հնարավոր է, որ հարցազրույցի բնթացքում ինչ-որ բան է տեղի ունեցել, ինչը և առաջացրել է նրա կեցվածքի կամ պատասխանելու պատրաստականության այդ փոփոխությունը:

Եթե հարցազրույցի պայմանները դառնում են վտանգավոր, գաղտնիությունը խախտվում է կամ կինը կամ նրա թարգմանիչը նշաններ են անում, որ ինչ-որ խնդիր կա, պատրաստ եղեք փոխել զրույցի թեման, ընդմիջում անել կամ հանդիպումն ավարտել:

Եթե հարցազրույցի ժամանակ օգտագործվում են հարցաթերթիկներ կամ հարցազրույցի ուղեցույցներ, ապա հարցազրույց վարողը ուշադրությունը շեղելու նպատակով պետք է ունենա ուրիշ թեմայով (օրինակ՝ առողջություն, մշակութային սովորույթներ կամ գեներային խնդիրներ) ավելի կարծ մի հարցաթերթիկ, որն անհրաժեշտության դեպքում կարող է անմիջապես հանել և դնել սեղանին: Այդ դեպքում զրույցի թեման կարելի է անմիջապես փոխել ավելի քիչ վիճահարույցի: Անվտանգության այս միջոցի մասին հարցվողը պետք է պարտադիր տեղեկացվի հարցազրույցի հենց սկզբից: Նա պետք է տեսակ լինի նաև այդ ուշադրությունը շեղող հարցաթերթիկի թեմային, որպեսզի ցանկացած պահին, եթե նա իրեն անհանգիստ զգա, կարողանա հեշտությամբ փոխել թեման կամ պատասխանել ուրիշ հարցերի:

## Փուլ չորրորդ. հարցազրույցի ավարտը

Հարցազրույցն ավարտեք դրական նոթայով

## Ոիսկեր

Թրաֆիկիմգը կարող է մի շարք ուժեղ էմոցիոնալ և հոգեբանական աղձագանքներ առաջացնել: Իրենց փորձառության մասին խոսելուց հետո որոշ կանայք իրենց թերևացած են զգում, իսկ մյուսները սկսում են ավելի վատ մտածել իրենց, իրենց վիճակի և ապագայի մասին: Կարևոր է, որ հարցազրույցից հետո կինն իրեն անպատված և անհույս չզգա:

## Խորհուրդներ

Եթե հնարավոր է, հարցազրույցը պետք է դրական նոթայով ավարտվի:<sup>10</sup> Մեջբերելով դրվագներ կնոջ պատմությունից, հարցազրույց վարողը կա-

եթե հարցազրույցի պայմանները դառնում են վտանգավոր, գաղտնիությունը խախտվում է կամ կինը կամ նրա թարգմանիչը նշաններ են անում, որ ինչ-որ խնդիր կա, պատրաստ եղեք փոխել զրույցի թեման, ընդմիջում անել կամ հանդիպումն ավարտել:

### Փակման խոսքի օրինակ՝

«Շատ շնորհակալություն ժամանակ հատկացնելու և ձեր փորձառության մասին ինձ պատմելու ուժ ունենալու համար: Ոչ ոք արժանի չէ նման վերաբերնունքի, որին դուք եք արժանացել: Դուք ակնհայտորեն շատ ուժեղ և խիզախ կին եք, որ կարողացել եք դիմանալ այս բոլոր ոտնագություններին»:

Որո՞ է նրան հիշեցնել, թե նրան ինչպես է հաջողվել դիմակայել դժվար իրավիճակներին: Նա կարող է հիշեցնել նաև, որ կնոջ կողմից տրված տեղեկությունները օգտագործվելու են ուրիշներին օգնելու համար:

Մասնագետների խնամքի տակ դեռ չգտնվող կամ լրացուցիչ օգնության կարիք ունեցողներին հարցազրույց վարողը պետք է տեղեկություններ տրամադրի նրանց հասու համապատասխան ծառայությունների մասին (տես ստորև՝ 3) և հարցվողին ասի, որ այդ ծառայությունները հասու են ցանկացած պահին, եթե նա ինքը պատրաստ կլինի դրանցից օգտվելու:

### 3. ՊԱՏՐԱՍՏԵՔ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ. ՄԻ ՏՎԵՔ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ՉԵՔ ԿԱՐՈՂ ԿԱՏԱՐԵԼ

Պատրաստ եղեք կնոջն իր լեզվով և տվյալ երկրի լեզվով (եթե դրանք տարբեր են) տեղեկություններ տրամադրել համապատասխան իրավաբանական, առողջապահական, սոցիալական և անվտանգության ծառայությունների և ապաստարանների մասին:

### 3.1 ԿԱՆԱՆՑ ՀԱՍՈՒ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԵՎ ԱԶԱԿՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՐԱՅՏՈՒՄ

#### ՈՒԽԱԿԵՐ

Թրաֆիկինգի ենթարկված կանայք իրենց առողջության կամ անվտանգության մասին օգտակար տեղեկություններ ստանալու հնարավորություն հազվադեպ են ունենում: Զափազանց ծանր վիճակում գտնվող մարդկանց հետ աշխատելիս հարցազրույց վարողը պարտավոր է նման տեղեկություններ հավաքել և հաղորդել հարցվողներին: Հարցազրույցը կնոջը նման տեղեկություններ ստանալու հարմար առիթ է տալիս: Այդպիսի օգնությունը կարող է փրկել կնոջ կյանքը, իսկ դրա տրամադրումը հարցազրույց վարողի կարևորագույն պարտականություններից մեկն է:

#### ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆԵՐ

Ռեսուրսների առումով պատրաստված եղեք: Աջակցության ծառայությունների մասին տեղեկություններ տրամադրելու միջոցով հարցազրույց վարողը կարող է օգնության կարևոր աղբյուրներ մատնանշել՝ միևնույն ժամանակ բարձրացնելով իր նկատմամբ կնոջ վստահության մակարդակը:

Վստահեցնելով, որ կնոջ հետ կատարվածը նրա մեղքը չէ և որ նրան ոչ ոք չի մեղադրում, կարելի է կնոջը խրախուսել, որ նա դիմի օգնության:

Տեղեկությունները պետք է ներկայացվեն հակիրծ և պարզ ձևով: Հարցազրույց վարողը պետք է համոզվի, որ կինը հասկացել է նրան տրամադրված տեղեկությունները, և ճշտի՝ նա լրացնելու հարցեր ունի՝, թե՝ ոչ: Եթե իրավիճակը թույլ է տալիս և դա վստանգավոր չէ, տեղեկությունները պետք է ներկայացվեն գրավոր:

### 3.2 ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԵԼԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՆԱՉԵԼԸ

#### ՈՒՍԿԵՐ

Ծառ կազմակերպություններ չեն ցանկանում կամ ի վիճակի չեն համապատասխան տեղեկություններ կամ աջակցություն տրամադրել թրաֆիկինգի ենթարկված կանանց:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Մինչև ցուցակում որևէ կազմակերպություն ընդգրկելը հարցազրույց վարողը պետք է համոզվի, որ տվյալ կազմակերպության կողմից տրամադրվող ծառայություններն օրինական են և օգտակար: Հարցազրույցներն սկսելուց առաջ հարցազրույց վարողը պետք է զրուցի պոտենցիալ ծառայություններ մատուցողների հետ՝ պարզելու, թե որքանով են նրանք պատրաստ բավարարել թրաֆիկինգի ենթարկված կանանց կարիքները:

Հարցազրույց վարողը պետք է այդ կազմակերպություններին տեղեկացնի, որ նրանցից ստացված տվյալները կարող են տրամադրվել թրաֆիկինգի ենթարկված կանանց:

Այն վայրերում, որտեղ աջակցության ծառայություններ չկան, անհրաժեշտ է ավելի հնարամիտ լինել և գտնել մի շարք ննանատիպ կազմակերպություններ, որոնք ցանկանում են և պատրաստ են տարբեր եղանակներով օգնել կարիքավոր կանանց: Հնարավոր է, որ հարկ լինի նրանց ծանոթացնել թրաֆիկինգի խնդրի բնույթին և նրանցից ակնկալվող օգնության հնարավոր շրջանակներին:

### 3.3 ՇՐՋԱՐԱՅԱՑՈՒԹՅՈՒՆ՝ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՐԱՄԱԴՐԵԼԻՄ

#### ՈՒՍԿԵՐ

Կավատների, գործակալների կամ գործատունների կողմից կնոջ աջակցություն տրամադրող կազմակերպությունների մասին տեղեկությունների հայտնաբերումը կարող է վտանգավոր լինել այդ կնոջ համար: Արդեն տանը գտնվող կնոջ մոտ ննան տեղեկություններ հայտնաբերելը կարող է խնդիրներ առաջացնել ընտանիքի անդամների հետ:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Ծառ հարմար է աջակցություն տրամադրող կազմակերպությունների մասին տեղեկությունները գրել փոքր քարտի վրա, որը հարցազրույցից հետո կինը կարող է տանել իր հետ և թաքնված պահել մինչև չորոշի այն օգտագործել: Տեղեկությունները պետք է լինեն կնոջ մայրենի լեզվով և տվյալ երկրի լեզվով, եթե դրանք տարբեր են, որպեսզի նա կարողանա օգնություն ստանալ այդ ծառայությունների հետ կապվելու գործում: Տեղեկությունները պետք է ընդգրկեն ծառայությունների հնարավորինս լայն շրջանակ: Քարտի վրա կարելի նշել միայն հասցեներ և հեռախոսահամարներ՝ առանց նշելու, թե դրանք ինչ են: Հնարավոր է, որ որոշ կանայք չեն կազմակերպություններ ստանալ:

Թրաֆիկինգի ենթարկված կանանց համար օգտակար ռեսուրսները ներառում են հետևյալ կազմակերպությունների տվյալները.

- Թրաֆիկինգի ենթարկված կանանց հետ աշխատանքում մասնագիտացած տեղական կազմակերպություններ (պետք է նշվեն նաև դրանց աշխատանքային ժամերը և դիմելու կարգը),
- Թրաֆիկինգի ենթարկված կանանց հետ աշխատանքում մասնագիտացած կազմակերպություններ, որոնք գործում են կնոջ հայրենիքում,
- Անվճար բուժծառայություններ (ընդհանուր բժշկություն, վերարտադրողական համակարգի բժշկություն, հիվանդանոցներ ու հոգեբուժական ծառայություններ, եթե այդպիսիք կան),
- Կացարանի հարցում օգնության աղբյուրներ և սոցիալական այլ ծառայություններ,
- Իրավաբանական օգնություն/խորհրդատվություն ներգաղթային օրենսդրության վերաբերյալ,
- Երկրի դեսպանատներ,
- Ապաստաններ,
- Տեղական եկեղեցիներ/համայնքի օժանդակության կազմակերպություններ,
- Լեզվի ուսուցման կենտրոններ,
- Կնոջ հայրենիքում գործող հասարակական կազմակերպություններ:

### Ինչ պետք է իմանալ աջակցության ծառայությունների մասին

- Օգնության ծևերը, որ յուրաքանչյուր կազմակերպություն ցանկանում է կամ ի վիճակի է տրամադրել,
- Ծառայության տրամադրման հետ կապված սահմանափակումները (օրինակ՝ կնոջ իրավաբանական կարգավիճակը, վճարունակությունը),
- Արդյոք նրանք օրենքով պարտադրված են իշխանություններին հայտնել բռնության, դեռահասների նկատմամբ բռնության դեպքեր կամ ապօրինի միջրանտներ հայտնաբերելու դեպքում,
- Արդյոք նրանք աջակից նոտեցում են դրսելորում միջրանտների, սերսի ինդուստրիայում աշխատողների կամ այլ կարիքավոր մարդկանց հանդեպ,
- Արդյոք նրանք կարող են բավարարել լեզվական կամ թարգմանչական տարրեր կարիքները,
- Ինչպիսի տեղեկատվություն կամ ինացություն է անհրաժեշտ նրանց, եթե նրանք թրաֆիկինքի ենթարկված կանանց հետ երեք չեն աշխատել:

**4. ճԻՇԸ ԸՆՏՐԵՔ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՔ  
ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻՆ ՈՒ ԳՈՐԾԵՆԿԵՐՆԵՐԻՆ**  
Ծանրութեք արեք թարգմանիչների, գործընկերների և այլ մարդկանց հետ աշխատելու բոլոր ռիսկերն ու առավելությունները, և ընտրելու ու ուսուցման պատշաճ մեթոդներ մշակեք:

### 4.1 ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՈՒՍԿԵՐՆ ՈՒ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ՈՒՍԿԵՐ

Դարցագորույցի ընթացքում օգնելու կամ կոնֆիդենցիալ տեղեկությունները մշակելու համար այլ անձանց, այդ թվում՝ թարգմանիչներ և հարցազրույց վարողներ վարձելը կապված է ռիսկի հետ, եթե նրանք ճիշտ չեն ընտրվում: Անհրաժեշտ է համոզվել, որ այդ մարդիկ ոչ մի կամ չունեն թրաֆիկինքով գրաղվող գործակալների հետ, և գնահատել, թե որքանով են նրանք պատրաստ աշխատանքի այս նույն ոլորտում:

Լուրջ մտահոգության առիթ կա, եթե ձեր աշխատակիցները չեն գիտակցում, թե կոնֆիդենցիալության խախտումներ ինչպիսի վտանգների հետ են կապված, եթե նրանք հարցազրույցները անփույթ ձևով են անցկացնում կամ լուրջ չեն վերաբերվում անվտանգության հարցերին:

Այն թարգմանիչներն ու աշխատակիցները, ովքեր չեն գիտակցում հարցերը նորանկատ ձևով տալու և կնոջը նույն նրբանկատությամբ պատասխաննելու կարևորությունը, կարող են լրիվ և անկեղծ պատասխաններ չստանալ և պատճառ դառնալ, որ կինն իրեն վիրավորված կամ նեղացած զգա:

Եթե թարգմանիչներն ու հարցազրույց վարողները տիրապետում են կնոջ մայրենի լեզվին, դա կնոշն ավելի հարմար և հանգիստ վիճակի մեջ է դնում, ինչն, իր հերթին, օգնում է թարգրացնել վստահության մակարդակը: Սակայն դա կարող է նաև հակառակ ազդեցություն ունենալ: Կանայք կարող են չվստահել իրենց համայնքի ներկայացնեցներին կամ հայրենակիցներին և ամաչել նրանց ներկայությամբ խստել: Որոշ կանայք ամաչում են խոսել այնպիսի բաներից (օրինակ՝ սերսի հետ կապված աշխատանք, սեռական ոտնձգություններ), որոնց մասին իրենց երկրում ուրիշների ներկայությամբ չեն խոսում: Ավելին, ոչ այնքան նրբանկատ թարգմանիչները կամ աշխատակիցները կնոջ պատասխանները կարող են դիտել որպես տեղական թամբասանքի լավ նյութ: Անկախ նրանից, թե հարցազրույցը որտեղ է տեղի ունենում՝ կնոջ հայրենիքում, թե արտասահմանում, բամբասանքը շատ արագ է տարածվում: Եթե թարգմանիչ կենսագրությունն ու ծանրությունն շրջանակները հնարավոր չեն ճշտել և գնահատել, ապա որևէ երաշխիք չկա, որ հարցազրույցի ժամանակ ստացած տեղեկությունները չեն հասնի այնտեղ, որտեղ չպետք է հասնեն:

Թրաֆիկինքի ենթարկված կանանց հետ հարցազրույցների ժամանակը շատ հաճախ սահմանափակ է՝ ինչպես կանանց անվտանգության, այնպես էլ նրանց էմոցիոնալ թարորության համար: Թարգմանվող հարցազրույցներն ավելի շատ ժամանակ են պահանջում՝ երկարացնելով նաև կնոջը ռիսկի ենթարկելու և նրան դժվար ու սրբեսային վիճակում պահելու ժամանակը:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Աշխատեք տեղական կազմակերպությունների ներկայացնեցիչ թարգմանիչների կամ անհատների հետ, ովքեր ծանոթ են բռնության

Ենթարկված կանանց հետ աշխատելու առանձնահատկություններին։ Ընդ որում, այդ անձինք չպետք է լինեն տվյալ կնոջ համայնքից, բացի այն դեպքերից, երբ հարցվողն ինքն է նման ցանկություն հայտնել։

- Հարցվողին հարցուեք՝ նախընտրում է նա արդյոք, որ հարցազրույցի ժամանակ նրան օգնի որևէ վստահելի ընկեր կամ գործընկեր։ Համոզվեք, որ այդ անձը հասկանում է հարցազրույցի նպատակը և իր կամքով հաճածայնում է օգնել։
- Մի օգտվեք կամավոր թարգմանչների ծառայություններից, որովհետև նրանք կարող են կապված լինել թրաֆիկինգի հետ կամ ինչ-որ օգուտներ ստանալ հարցազրույցին մասնակցելուց։
- Բարդ քննարկումների համար կարող են օգտակար լինել այսպես կոչված «մշակութային միջնորդները» կամ մարդիկ, ովքեր կարող են հարթել հարցազրույց վարողի և հարցվողի հայացքների միջև եղած տարբերությունները։
- Գնահատեք իրավիճակը։ Եթեմն, երբ հարցազրույցը հնարավոր է միայն այնպիսի թարգմանչի կամ անձնավորության օգնությամբ, որին չեք վստահում, ավելի լավ է հարցազրույց ընդհանրապես չանցկացնել՝ ելնելով վերը նշված բազմաթիվ պատճառներից։
- Մի վարձեք թարգմանչների և մարդկանց, ովքեր կարող են դատապարտել կնոջը, ցնցվել կամ վիրավորվել կնոջ հայտնած տեղեկություններից։ Թարգմանչներին ու աշխատակիցներին պետք է մանրամասն ծանոթացնել թրաֆիկինգին և դրան հաճախ ուղեկցող ֆիզիկական և սեռական ուժնեղությունների ողջ շրջանակին։
- Հատուկ առանձնազրույց նախատեսեք այն թարգմանչների կամ գործընկերների հետ, ովքեր կարող են բացասապես ազդված և վիատված լինել հարցազրույցից։

## 4.2 ԱՐԱԿԱՆ ՍԵՌԻ ԹԱՐԳՄԱՆԻՉ ԿԱՄ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐՈՂ ՎԱՐՁԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՐՑԵՐ

### ՈՒԽԿԵՐ

Որոշ դեպքերում, երբ հարցվողները սեքսի ինդուստրիայում աշխատող կանայք են, արական սերի հարցազրույց վարողները կարող են ավելի հեշտ նրանց հետ կապի մեջ մտնել և ավելի քիչ կասկածներ հարուցել։ Սակայն թրաֆիկինգի հետ կապված շատ դեպքերում հարցվողներին դավաճանողները, ֆիզիկական կամ սեռական բռնությունների ենթարկողները հենց տղամարդիկ են (օրինակ՝ ընտանիքի անդամները, գործակալները, գործառնությունները, գինվորականները) և այդ պատճառով հնարավոր է, որ կանայք չվստահեն տղամարդ հարցազրույց վարողին, ամաչեն կամ անհարմար զգան տղամարդու ներկայությամբ իրենց անձնական կյանքի մասին պատմելուց։

### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Այն դեպքերում, երբ մարմնավաճառությամբ գրաղվող կնոջ հետ նրա աշխատանքի վայրից դուրս կապվելը հնարավոր չէ առանց նրան վտանգելու, եթեմն նախընտրելի է, որ այդ կնոջ հետ առաջին կոնտակտ հաստատող տղամարդ լինի՝ այսմանով, որ կինը հնարավորինս շուտ տեղեկացվի այդ մարդու այցելության բուն նպատակի մասին։

Որոշ դեպքերում կանայք նախընտրում են գրուցել տղամարդկանց հետ, կարծելով, որ այլ կանայք կարող են ավելի խիստ ու դատապարտող լինել, քան տղամարդիկ, կամ որովհետև տվյալ կանանց վրա բռնացողն ու նրանց շահագործողը կին է։ Եթե հնարավոր է, հարցվողին միշտ պետք է հարցնել՝ արդյոք նա որևէ նախընտրություններ ունի՝ հարցազրույց վարողի սերի առումով։

**Մի անգամ ԱՄՆ-ում  
իշխանությունները  
որպես թարգմանչ  
առանց իմանալու  
ներգրավել են  
թրաֆիկինգով  
գրաղվողներից մեկին՝ մի  
երիտասարդ աղջկա  
ենթադրվող  
ինքնասպանության  
վերաբերյալ  
թրաֆիկինգի  
ենթարկված մի քանի այլ  
կանանց հարցաքննելու  
համար։ Այդ մարդն  
իշխանություններին ասել  
էր, որ նրանց քերին է։  
Ամիսներ անց, անանուն  
ահազանգից հետո,  
ոստիկանությունը չեղոք  
թարգմանչի օգնությամբ  
նորից է հարցաքննել այդ  
կանանց և միանգամայն  
այլ պատասխաններ է  
ստացել։**

#### **4.3 ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՐՑԱՁՐՈՒՅՑ ՎԱՐՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԿԱՆ ԲԱՐՈՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴՐՆԵՐ**

##### **Ոիսկեր**

Թրաֆիկինգի ենթարկված կմոց հետ հարցագրույց անցկացնելը կարող է հարցագրույց վարողի համար վտանգ առաջացնել թրաֆիկինգով զբաղվող գործակալների և հարցվողի աշխատանքի կամ սոցիալական շրջանակի հետ կապ ունեցող նարդկանց կողմից:

Թրաֆիկինգի ենթարկված կանաց հետ հարցագրույցները կարող են նաև էնոցիոնալ վնաս հասցնել հարցագրույց վարողներին: Ոտնձգություններով և տրավմաներով լի անձնական պատմություններ լսելը հաճախ էնոցիոնալ ուժասպառություն կամ հոլովակը են առաջացնում հարցագրույց վարողների մոտ: Յարավոր է, որ հարցագրույց վարողները պատրաստ չեն նաև ճնշող հոգեվիճակների, ուստի նրանց անհրաժեշտ է օգնել՝ հաղթահարել այդ գագամունքները:

Եթե հարցագրույց վարողն ինքն է ենթարկվել ոտնձգությունների կամ խորականության, ապա նրա այդ փորձը կարող է պայմանավորել, թե հարցվողի պատմածը նրա վրա ինչպես է ազդում: Յարցվողներին լսելը որոշ հարցագրույց վարողների մոտ կարող է արթնացնել անցյալում վերապրած բռնությունների հիշողություններ և զգացնունքներ, որոնք նրան կարող են խանգարել պարտաճանաչ և անկողնակալ հարցագրույց վարել:

Յարցագրույց վարողները կարող են իրենց անօգնական զգալ կամ էլ հակառակ՝ ցանկանան ստանձնել «փրկչի» դերը: Առաջին դեպքում հարցագրույց վարողը կարող է խուսափել որևէ օգնություն առաջարկելուց, կարծելով, թե կոնց պրոբլեմները չափազանց մեծ են, իսկ իր ռեսուրսները՝ չափազանց աննշան: Իսկ երկրորդ դեպքում հարցագրույց վարողը կարող է անհրաժեսական խոստումներ տալ:

##### **Խորհուրդներ**

- Եթե հարցագրույցից առաջ կամ նրա ընթացքում հարցագրույց վարողը կամ հարցվողը սկսում են կասկածել, որ հարցագրույցի վայրն ապահով չէ, ապա հարցագրույցը չպետք է տեղի ունենա կամ պետք է դադարեցվի մինչև ապահով տեղ չգտնվի: Եթե հնարավոր է հարցագրույցի օրը փոխել, հաճախ նպատակահարմար է այն նույն տեղում չանցկացնել:
- Եթե հարցագրույց վարողը պատրաստվում է հարցագրույցը միայնակ վարել, այն ել՝ մեծ ռիսկի հետ կապված վայրում, ապա նա պետք է համոզված լինի, որ դրսում որևէ մեկը գիտի, թե նա ուր է գնում, հարցագրույցը որ ժամին է լինելու և որ ժամին պետք է ավարտվի: Յենց որ հարցագրույց վարողը ապահով լրում է հարցագրույցի վայրը, այդ դրսի անձը պետք է անմիջապես տեղեկացվի, որ ամեն ինչ նորմալ է անցել: Եթե տվյալ վայրում բջջային կապ կա, ցանկալի է, որ հարցագրույց վարողը բջջային հեռախոս ունենա իր հետ:
- Եթե կինը գաղտնի տեղեկությունների է տիրապետում, որոնք կարող են վտանգավոր լինել հարցագրույց վարողի համար (օրինակ՝ տեղեկություններ թրաֆիկինգով զբաղվողների, կոռումպացված պաշտոնյաների, ոստիկանության մասին և այլն), հարցագրույց վարողը պետք է մեղմորեն կոնջը համոզի, որ նա դրանց մասին չխսի իր ներկայությամբ: Միևնույն ժամանակ հարցագրույց վարողը պետք է առաջարկի, թե կինն այդ կարգի տեղեկությունները ուն և որտեղ հայտնի:

**Մի անփորձ  
հարցագրույց վարող,  
որն աշխատում է  
արտասահմանում՝  
թարգմանչի միջոցով,  
անցկացվող  
հարցագրույցի ժամանակ  
սկսում է խնդմնդալ: Դա  
անում է ոչ թե  
չարությունից, այլ  
հոլովակը: Այսպիսի  
արձագանքը շփոթեցնում  
է հարցվողին. նա սկսում  
է մտածել, որ  
հարցագրույց վարողն իր  
վրա է ծիծաղում:**

- Հարցազրույց վարողներն ու թարգմանիչները պետք է հատուկ վերապատրաստում կամ տեղեկություններ ստանան հետևյալի մասին。
    - կանանց թրաֆիկինգի դիմամիկա,
    - ռիսկեր, ինչպես նաև անվտանգության և արտակարգ իրավիճակների հետ կապված ընթացակարգեր,
    - տարրական տեղեկություններ ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնության, հարկադրման և խոշտանգումների մասին,
    - տարրական տեղեկություններ գենդերային և ազգային խորականության և անհավասարության մասին,
    - հարցազրույցի նյութ հանդիսացող աշխատանքի ոլորտի հետ կապված խնդիրներ ու գաղափարներ (այդ ոլորտներից են՝ սեքսի խորուստիա և մարմնավաճառություն, սպասավորություն տներում, գործարանային բանվորական աշխատանք, գյուղատնտեսական բանվորական աշխատանք),
    - թեմային վերաբերող տեղական տերմինարանություն:
  - Այն ամենը, ինչ ընդհանուր առնամբ կարելի է բնութագրել որպես «զոհին մեղադրելու» մոտեցումներ, հաճախ հանդիսանում է ընդհանուր կուլտուրայի մի մաս: Դա կարող է ազդել հարցազրույց վարողի՝ հարցվողից անկեղծ և ամբողջական պատասխաններ ստանալու կարողության, ինչպես նաև պատասխանների ընկալման և նեկանարանման եղանակի վրա:
- Հետևաբար, հարցազրույց վարողները պետք է հաղթահարեն իրենց սեփական նախապաշարնունքները, երկյուղները և կարծրատիպերը այն կանանց վերաբերյալ, ովքեր՝
- միգրանտներ են,
  - ենթարկվել են սեռական բռնությունների,
  - աշխատում են սեքսի ինդուստրիայում կամ հասարակության մեջ անհարգի այլ աշխատանք են կատարում (սպասավորություն տներում, բանվորություն գործարաններում կամ գյուղատնտեսության ոլորտում)
  - աղքատ են կամ սոցիալապես ու տնտեսապես անապահով:
- Հարցազրույց վարողները պետք է քաջ գիտակցեն թրաֆիկինգի ենթարկված կանանց օգնելու իրենց հնարավորություններն ու սահմանափակումները:

**Հարցվողներին լսելը  
որոշ հարցազրույց  
վարողների մոտ կարող է  
արթնացնել անցյալում  
վերապրած  
բռնությունների  
հիշողություններ և  
զգացմունքներ, որոնք  
նրան կարող են  
խանգարել  
պարտաճանաչ և  
անկողմնակալ  
հարցազրույց վարել:**

**Մի մարդ կանանց  
թրաֆիկինգի մասին  
ֆիլմ է պատրաստում,  
որի մեջ օգտագործում է  
թրաֆիկինգի  
ենթարկված մի քանի  
կանանց ցուցմունքներ:**  
**Ի սկզբանե հեղինակը  
մտադիր է ֆիլմը միայն  
արտասահմանում  
ցուցադրել: Սակայն  
շուտով ֆիլմը  
ցուցադրվում է ազգային  
հեռուստատեսությամբ և  
կանանց դեմքերն առանց  
որևէ քողարկման  
հայտնվում են էկրանին:**

## 5. ԱՊԱՐՈՎԵՔ ԱՆԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳԱՂՏՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

Ապահովեք հարցվողի անանունությունն ու գաղտնիությունը հարցագրույցի գործընթացի ողջ ընթացքում՝ նրան դիմելու պահից մինչև նրա գործի մանրամասները հրապարակելու ժամանակը:

### 5.1 ԿՈՆՖԻԴԵՆՑԻԱԼՈՒԹՅԱՆ ԱՊԱՐՈՎՈՒՄ

#### ՈՒՍԿԵՐ

Կոնֆիդենցիալության ապահովումը չափազանց կարևոր է ինչպես կնոջ անվտանգության համար, այնպես էլ նրա կողմից տրամադրված տեղեկությունների որակի առումով:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Հարցագրույցը սկսելուց առաջ բացատրեք, թե ինչպիսի միջոցներ են ձեռնարկվել կնոջ ինքնության կոնֆիդենցիալությունը ապահովելու և նրա անձնական տվյալները խստ գաղտնի պահելու համար: Հարցրեք նրան, թե արդյոք այդ միջոցները բավարար են թվում:
- Կանանց պետք է տեղեկացնել, որ նրանք պարտավոր չեն հայտնել իրենց իսկական անունը (կարող են կեղծ անուն օգտագործել), բնակավայրը կամ ազգությունը: Եթե այդպիսի տեղեկությունները հավաքելն անհրաժեշտ է (օրինակ՝ օրենքի հետ կապված հարցագրույցի դեպքում), ապա լավ կլինի, որ այդ տեղեկությունները չգործույն հարցագրույց վարողի գրառումների միջև կապը կարելի է հաստատել ծածկագրերի միջոցով, որոնք պետք է պահպեն գրառումներից առանձին: Կանանց անձնական գործերուն հավաքված տեղեկությունները չպետք է ցույց տրվեն ուրիշներին (օրինակ՝ ընտանիքի անդամներին, ընկերներին, ոստիկանության կամ ներգաղթի ծառայությունների աշխատակիցներին)՝ առանց հարցվողի կշռադատված և բացահայտ թույլտրվության:
- Առանձին հարցագրույցների բովանդակությունը կարող է քննարկվել միայն այն մարդկանց հետ, ովքեր նույնապես պարտավորվել են պահպանել կոնֆիդենցիալությունը (օրինակ՝ աշխատակիցներ, բուժժառաջողներ): Ընդ որում, ովա պետք է արվի միայն անհրաժեշտության դեպքում և միայն հարցվողի թույլտրվությամբ: Հարցագրույցի բովանդակությունը երբեք չպետք է քննարկվի հասարակական վայրերում, հատկապես այնպիսի տեղերում, որտեղ այլ անձինք կարող են լսել (օրինակ՝ տաքսու վարորդների կամ տոնսավաճառների ներկայությամբ, որովհետև այդ մարդիկ կարող են կապված լինել թրաֆիկինգով զրադարձների հետ):
- Հարցվողներից մեկից ստացած տեղեկությունները չպետք է քննարկվեն այլ հարցվողների հետ այնպես, որ նրանք կարողանան ճանաչել այդ հարցվողին: Երբեմն օգտակար է ընդհանուր առնամբ խոսել նմանատիպ իրավիճակներում գտնվող ուրիշ մարդկանց մասին, սակայն դա պետք է արվի այնպես, որ այդ մարդկանց անձնական տվյալները չբացահայտվեն:
- Եթե հարցագրույցները ձայնագրվում են, ապա պետք է օգտագործել ոչ թե մարդկանց իսկական անունները, այն նրանց ծածկանունները: Չայներիզները պետք է պահպեն փակվող պահարանում, որից միայն որոշակի մարդիկ կարող են օգտվել: Չայներիզները պետք է ջնջվեն սղագրությունը պատրաստելուց անմիջապես հետո:
- Հարցագրույցից ստացած տեղեկությունները հրապարակելուց առաջ հարցվողի մասին անձնական տեղեկությունները պետք է փոփոխվեն, որպեսզի այդ մարդկանց հնարավոր չլինի ճանաչել:

- Օրինակ՝ հրապարակումները չպետք է նշեն կնոջ բնակավայրի անունը, աշխատավայրը կամ նրա գործընկերների անունները: Կարելի է փոխել նաև կնոջ գտնվելու վայրի և երկրի անունը: Լուսանկարների և տեսաժապավենների վրա երևալու երկարաժամկետ և լուրջ հետևանքների պատճառով կնոջ ամբողջ դեմքը (այսինքն՝ ոչ միայն աչքերը) պետք է քողարկված լինի: Նույնը վերաբերում է նաև սպիտակին, դաշվածքներին և ճանաչելի այլ նշաններին: Բացի այդ, լուսանկարել կամ տեսագրել կարելի է միայն այն դեպքում, եթե կինը տեղյակ է դրա մասին, լիովին հասկանում է, թե նյութերն ինչպես են օգտագործվելու և որտեղ են տարածվելու, և տվել է գրավոր թույլտվություն: Լուսանկարները պետք է արվեն այնպես, որ հնարավոր չլինի ճանաչել ապաստանները, ծառայություն մատուցող կազմակերպությունները կամ թրաֆիկինգի ենթարկված կանանց օգնություն ցույց տվող անձանց:

## 6. ՍՏԱՑԵՔ ՀԱՐՑՎՈՂԻ ԿՇՈԱԴՎԱԾՎԱԾ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Հարկ է, որ յուրաքանչյուր հարցվող հստակորեն ըմբռնի հարցազրույցի բովանդակությունն ու նպատակը, տրամադրվող տեղեկությունների օգտագործման նպատակները, հարցերին պատասխանելուց հրաժարվելու, հարցազրույցը ցանկացած ժամանակ դադարեցնելու, ինչպես նաև հարցազրույցի ընթացքում տրամադրված տեղեկությունների օգտագործման եղանակների սահմանափակման իր իրավունքները:

### 6.1 ԿՇՈԱԴՎԱԾՎԱԾ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ՊԱՏՇԱճ ԶԵՎԵՐԸ

#### ՈՒԽԿԵՐ

Խսկապես կշռադատված համաձայնություն ստանալը կարող է դժվար լինել՝ հաշվի առնելով կնոջ շատ բնական կասկածամտությունը օտարների նկատմամբ, հաճախ նաև՝ լեզվական, մշակութային և սոցիալ-տնտեսական տարրերությունների պատճառով: Շատ կանայք, հատկապես գյուղական և ավելի թերզարգացած վայրերի բնակիչները, կարող են անհջանակ զգիտակցել հարցազրույց տալու բոլոր հնարավոր հետևանքները (հատկապես եթե հարցազրույցին մասնակցում են ՁԼՄ-ները) և առանց լավ մտածելու հապճեպ տալ իրենց համաձայնությունը:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Քանի որ հարցազրույցները կարող են ֆիզիկապես վտանգավոր և հոգեբանորեն ճնշող լինել և հետ չեն կարող վերցվել, չափազանց կարևոր է, որ հարցազրույց վարողը հստակ բացատրի:
  - հարցազրույցի պատճառները,
  - քննարկվելիք թեմաները,
  - հարցազրույց տալու հետ կապված հնարավոր ռիսկերն ու օգուտները և
  - հարցերի անձնական և հնարավոր է նաև՝ ցավ պատճառող բնույթը:

Եթե կինը լիովին հասկանում է հարցազրույց վարողի մտադրությունները և հարցերի նպատակը, ապա թիշ հավանական է, որ կասկածի, թե իր տված տեղեկությունները կօգտագործվեն իր դեմ կամ որևէ վնաս կիասցնեն իրեն:

- Ցանկալի է, որ հարցազրույց տալու խնդրանքով կնոշն առաջին անգամ դիմի այնպիսի մեկը, ում նա վստահում է: Օրինակ՝ դա կարող է լինել ծառայություններ մատուցող մի կազմակերպություն կամ անհատ, որի

**Թրաֆիկինգի մասին մի ֆիլմում կանանց դեմքները լավ չեն քողարկվում, որի արդյունքում կանայք հեշտորեն ճանաչելի են դառնում: Սակայն մինչև ֆիլմի ցուցադրումը կանանցից մեկին հաջողվել էր իր ծնողներից և ամուսնուց թաքցնել արտասահմանում անցկացրած մի քանի մղջավանջային ամիսների գաղտնիքը:**

## Կշռադատված համաձայնություն ստանալու խնդրանքի օրինակ

Մենք հետազոտություն ենք անցկացնում թրաֆիկինգի ենթարկված կանանց առողջական վիճակի մասին, որպեսզի առողջապահական ծառայություններ մատուցելու ավելի լավ եղանակներ գտնենք։ Մենք կցանկանայինք Զեզ հետ խոսել /ընդհանուր առմամբ նշեք թեման/ մասին և հարցեր տալ /նշեք հարցերի հիմնական թեմաները, այդ թվում նաև գաղտնի տեղեկությունները, որոնք ծեզ անհրաժեշտ են մասին։

Ես Զեր անունը չեմ հարցնելու։ Զեր բոլոր ասածները խիստ գաղտնի են պահպելու։ Ինքնուրյան մասին որևէ տեղեկություններ չեն հրապարակվելու։ Ես չեմ օգտագործել Զեր անունը, Զեր քաղաքի անունը, Զեզ թրաֆիկինգի ենթարկած մարդու անունը և Զեր ընտանիքի մասին տեղեկությունները։ Այստեղ ճիշտ կամ սխալ պատասխաններ չկան։ Որոշ հարցեր կարող են ծանր հիշողություններ արթնացնել։ Դուք կարող եք շշտապել այդ հարցերին պատասխանելիս, կամ ընդհանրապես հրաժարվել այդ հարցերին պատասխանելուց։ Զեր պատասխաններն օգտագործվելու են նմանատիպ դրության մեջ գտնվել և նմանատիպ առողջապահական կարիքներ ունեցող կանանց օգնելու համար։

Մենք քննարկել ենք հնարավոր ռիսկերն ու օգուտները, ինչպիսիք են /թվարկեք ռիսկերի և օգուտների մասին նախորդ քննարկման ժամանակ նշված ռիսկերն ու օգուտների/, ինչպես նաև ռիսկերը նվազեցնելու եղանակները, ինչպիսիք են /թվարկեք նախորդ քննարկման ժամանակ հնչած գաղափարները ռիսկերը նվազեցնելու մասին։

Եթե չեք ցանկանում, Դուք պարտավոր չեք մասնակցել այս հարցագրույցին։ Եթե համաձայն եք շարունակել, Դուք կարող եք հարցագրույցը ցանկացած պահին դադարեցնել։ Եթե ուզում եք որևէ հարց չպատասխանել կամ ինձ հարց տալ, ինձ հանգիստ կարող եք ընդհանել։ Այս հարցագրույցը կտվի մոտավորապես 30 րոպե։

Համաձայն եք մասնակցել հարցագրույցին։

Հարմագույն է իինա և այստեղ խոսելու։

հետ արդեն լավ հարաբերություններ են ձևավորվել։ Այդ կազմակերպությունը կամ անհատը կնոջը կարող է բացատրել հարցագրույց տալու բոլոր հնարավոր բացասական ու դրական հետևանքները։ (Այս առաջին խնդրանքն ընդհանուր կնոջ հետ ամվանգ ձևով կապվելու միջոց է և չի փոխարինում հարցագրույց տալու պաշտոնական խնդրանքը և համաձայնություն ստանալու ողջ գործընթացը, որը պետք է իրականացնի անձամբ հարցագրույց վարողը՝ հարցագրույցից առաջ։) Հաշվի առմելով թրաֆիկինգի դիմամիկան և կողակիցների դերը, սովորաբար վերջիններս չեն տալու միջոցները։ Ակունքների կամ հասարակաց տների տերերին դիմելը կնոջը կարող է անելանելի վիճակի մեջ դնել և կասկածներ առաջացնել։ Այդ դեպքերում անկեղծ պատասխաններ ստանալը սովորաբար անհավանական է։ Նմանապես, ուստիկանության կամ ներգաղթային ծառայությունների միջոցով կնոջը դիմելը նրան կարող է անհանգստություն պատճառել, ինչի արդյունքում պատասխանները կլիմեն շատ գգույշ, եթե ոչ կենք։ (Կալանքի տակ գտնվող կանանց հետ հարցագրույցները այլ լուրջ խնդրներ են առաջացնում, որոնք այստեղ չենք քննարկելու։)

- Պատրաստեք հստակ հայտարարություն, որը նկարագրում է հարցագրույցի թեման և նպատակները, ինչպես նաև պատասխանների օգտագործման եղանակը։ Հայտարարությունն ընթերցեք բարձրաձայն՝ հարցեր տալու և որոշ կետեր պարզաբանելու հնարավորություն տալով կնոջը։
- Ռիսկերը քննարկեք համակարգված ձևով (տես՝ «1.1 Հարցագրույց վարելու որոշումը»), անվտանգությունը գնահատելու համար տրվող հարցերի օրինակները)։ Խոսեք հնարավոր օգուտների (օրինակ՝ կնոյն փորձառությունը քննարկելու, խնդրների կամ կարիքների մասին պատճելու, ուղիշ կանանց օգնելու հնարավորություն) և հարցագրույցից կնոյն ակնկալիքների մասին (օրինակ՝ օգնություն կամ վճարում)։
- Այս դեպքերում, եթե հարցվողի և հարցագրույց վարողի նայենի լեզուները տարբեր են, լրացնեցիք միջոցներ են հարկավոր, որպեսզի կնոյն համաձայնությունն իսկապես կշռադատված լինի։ Այդ միջոցներից է, օրինակ, կնոյն մայրենի լեզվով տեղեկատվական թերթիկ պատրաստելը։ Այդ թերթիկը պետք չէ թողնել կնոյն մոտ, քանի որ ուրիշները կարող են այն հայտնաբերել նրա մոտ։
- Հարցագրույցի համար վճարելու որոշումները դժվար են։ Հարցագրույցի համար վճարումները երեքման կարող են կամաժի տակ դնել հավաքված տեղեկությունների ծննարտացիությունը, հատկապես եթե առաջարկվող գումարները շշակելի են։ Մյուս կողմից, կարևոր է կնոյն փոխհատուցել նրա ժամանակի, կորցված աշխատավարձի և այլ ծախսերի (օրինակ՝ ճանապարհածախի և երեխաների խնամքի) համար։ Քանի որ կանայք կարող են պատճել, եթե գործատումները, կավատները կամ թրաֆիկինգով զբաղվողները նրանց մոտ լրացնեցիք գումարներ հայտնաբերեն, կարևոր է կնոյն հետ քննարկել, թե որն է նրան փոխհատուցելու լավագույն եղանակը։ Պետք է պարզել, թե ինչպես է նա ցանկանում վճարվել՝ կամիսկով, թե նյութական բարիքներով (օրինակ՝ անձնական իդգինայի պարագաներ, օճառ, շամպուն, պահպանակներ, ուտելիք, հագուստ և այլն), կամ արդյոք նա կնախընտրեր, որ գումարն ուղարկվի իր ընտանիքին կամ տրվի որևէ մի վստահելի նարդու։ Կանանց հետ խոսելու համար կավատներին, հասարակաց տների տերերին և ուստիկաններին վճարելը էթիկական խնդրներ է առաջ բերում, կարող է պրոբեններ առաջացնել կանանց համար և, ամենայն հավանականությամբ, կասկածների տեղիք տակ հարցագրույց վարողի նպատակների վերաբերյալ։ Ուստի, այդպիսի վճարումները հանձնարարելի չեն։
- Եթե հնարավոր է (այսինքն՝ եթե ապահով է և հարցվողը ցանկանում է), կնոյն առաջարկեք նորից հանդիպել և նրան տակ թերթի հոդվածները, հետագործությունների արդյունքները կամ ծրագրին վերաբերող թուղթները, եթե նա կարծում է, որ ավելի ուշ նորից հանդիպելը վտանգավոր չէ։

**7. ԼՍԵՑԵՔ ԵՎ ՀԱՐԳԵՔ ԻՐ ԻՐԱՎԻՇԱԿԻ ԵՎ  
ԻՐԵՆ ՍՊԱՌԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ՅՈՒՐԱՋԱՆՉՅՈՒՐ ԿՆՈԶ ԳՆԱՅԱՏԱԿԱՆԸ**  
Գիտակցեք, որ յուրաքանչյուր կին իր ուրույն  
մտահոգություններն ունի, և որ իր կողմից այդ  
մտահոգությունների ըմբռնումը կարող է տարբերվել  
ուրիշների գնահատականից:

**Առաջարկվող օգնության  
տարբերակները պետք է  
նկարագրվեն չեզոք  
ձևով, իսկ հարցագրույց  
վարողը չպետք է  
չափազանցնի այդ  
օժանդակության  
աստիճանը կամ  
հավանականությունը:**

## 7.1 ԽՈՐՃՈՒՐԴՆԵՐ ԿԱՄ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՋԱՐԿԵԼԸ

### Ոիսկեր

Լավագույն մղումներ ունենալով հանդերձ, հարցագրույց վարողը կարող է կարծել, որ ինքն ավելի լավ գիտի, թե կնոցն ինչ է հարկավոր, և որոշել նրան խորհուրդներ տալ, գործողությունների դիմել կամ կնոցը ստիպել դիմել գործողությունների, որոնք հարցագրույց վարողի կարծիքով կրա-րելավեն կնոց դրույթունները: Բարի մղումներով պայմանավորված ցանկու-թյունները կամ գործողությունները (օրինակ՝ փախուստը թրաֆիկինգով զբաղվողներից, իշխանություններին դիմելը, այնպիսի թեմաների քննար-կումը, որոնք կինը դեռ պատրաստ չէ քննարկել և այլն) կարող են վնասա-կար հետևանքներ ունենալ, եթե նախապես կնոց հետ նրա իրավիճակը մանրամասն չի քննարկվել:

### Խորհուրդներ

Նախարան որևէ խորհուրդ տալը կամ գործողություն առաջարկելը, հարկ է կնոց հետ քննարկել, թե ինչպես է նա տեսնում իր իրավիճակը, ինչ տար-բերակներ ունի, որոնք են այդ տարբերակների առավելություններն ու դրանց հետ կապված ռիսկերը, և երբ է ճիշտ ժամանակը առաջարկվող փոփոխությունները կյանքի կոչելու համար: Եթե հնարավոր է, օգտակար է նաև խորհրդակցել մասնագետների հետ, ովքեր թրաֆիկինգի ենթարկ-ված կանանց հետ աշխատելու փորձ ունեն: Բացի այդ, մինչ այժմ ճգնա-ժամային իրավիճակից խուսափելու և ծանր դրությանը դիմանալու հա-մար կնոց կողմից կիրավված ռազմավարության և միջոցների մասին հարցնելը հարցագրույց վարողին կարող է օգնել ավելի լավ պատկերա-ցում կազմել կնոց դրույթան գործնական իրականությունների մասին: Այդ կարգի հարցելը նաև կնոցը հիշեցնում են նրա ուժի մասին:

Եթե հարցագրույց վարողը կարծում է, որ խորհուրդ ունի կնոցը տալու, ա-պա առաջարկվող օգնության տարբերակները պետք է նկարագրվեն չե-զոք ձևով, իսկ հարցագրույց վարողը չպետք է չափազանցնի այդ օժան-դակության աստիճանը կամ հավանականությունը: Տարբերակները պետք է ներկայացվեն հավասարակշռված ձևով, որպեսզի կինը հիմար դրության մեջ չընկնի կամ իրեն անշնորհակալ չզգա, եթե չուզենա ընդու-նել առաջարկվող օգնությունը: Խորհուրդները պետք է հաշվի առնեն հնարավոր ռիսկերը և հստակորեն ներկայացնեն դրական արդյունքները:

Քազվադիք չեն դեպքերը, երբ թրաֆիկինգի իրավիճակում գտնվող կա-նանց հետ հանդիպող հարցագրույց վարողները ցանկանում են փրկել նրանց: Ոչ պրոֆեսիոնալ կամ ոչ պաշտոնական փախուստը շատ վտան-գավոր տարբերակ է, որը հաճախ անընդունելի է կնոց համար, քանի որ փախուստի դիմելիս կինը հաճախ տեղյակ չէ իր ներկայիս դրությունից դուրս գալու բոլոր հնարավոր հետևանքներին: Դրանցից են՝

- տանը, ընտանիքի անդամների կողմից պատժված լինելու վտանգը,
- հանրության կողմից կնոց գործողությունների գնահատում, կամ անգամ՝ դատապարտում, ընդ որում այդ գործողությունները կարող են դիտվել որպես նրա ընտրությունը,

- Թրաֆիկինգի  
իրավիճակից դուրս  
գալու մասին մտածող  
կնոջ հետ անհրաժեշտ է  
քննարկել հետևյալ  
խնդիրները.**
- Նախապես պլանավորելու  
կարևորությունը,
  - Գործնականում որտեղ  
կարող է ապրել և ինչպես  
է վաստակելու,
  - Ովքեր կարող են նրան  
փնտրել և որքանով  
վճռական կլինեն նրան  
կամ նրա ընտանիքի  
անդամներին  
հետապնդելու հարցում,
  - Նրա հոգեկան վիճակը և  
անհրաժեշտ օգնությունը,
  - Կավատների, տերերի և  
այլ մարդկանց հետ նրա  
կախյալ  
հարաբերությունները և ով  
է նրան սատարելու  
այնտեղից դուրս գալուց  
հետո,
  - Գործնական  
հետևանքները  
(ներգաղթային  
կարգավիճակը, ընտանիք  
վերադառնալու  
հնարավորությունը,  
ֆիզիկական  
անվտանգությունը,  
մենակությունը, վախը և  
հոգեկան առողջության  
հարցում աջակցությունը):

- կասկածներ կնոջ շարժառիթների, արժանահավատության և  
բնավորության վերաբերյալ,
- խնդիրներ ներգաղթային ծառայությունների հետ և արտաքսում,
- պարտքը մարելու անկարողություն,
- ապաստանի հսկողության տակ մնալու անհրաժեշտություն,
- կավատ/զուգընկերոց հետ բոլոր կապերը խզելու պարտավորություն,
- ոստիկանությունում կամ բաց դատարանում ցուցմունքներ տալու  
անհրաժեշտություն,
- կալանք, ձերբակալություն, քրեական պատասխանատվություն  
(օրինակ՝ ներգաղթի և աշխատանքային օրենսդրությունը խախտելու  
համար),
- պարտադրված կամ թերի ՄԻԱՎ/ԶԻԱՅ կամ այլ բժշկական  
ստուգումներ:

Գործողությունների հնարավոր տարբերակները քննարկելուց հետո  
հարցազրոյց վարողը պետք է հստակ և հակիրծ ձևով տրամադրի  
նախօրոր հավաքված տեղեկությունները օժանդակություն տրամադրող  
կազմակերպությունների մասին և կնոջը ժամանակ և հնարավորություն  
տա իր որոշումը կայացնելու համար:

## 7.2 ԻՐ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿՆՈԶ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԳԵԼԸ

### Ոիսկեր

Նույնիսկ ամենասարսափելի պայմաններում գտնվող կանայք կարող են  
որոշել՝ չընդունել իրենց առաջարկվող որևէ օգնություն: Բուժօգնության,  
նվերներ տալու կամ փախուստ կազմակերպելու առաջարկները հաճախ  
շատ գայթակիշ են այն մարդկանց համար, ովքեր ջանում են ինչ-որ մի  
բան արած լինել: Ինչպես արդեն նշել է, կնոջ անունից կամ նրա համար  
որևէ գործողության դիմելուց առաջ անհրաժեշտ է ստանալ նրա  
համաձայնությունը:

### Խորհուրդներ

Բացի հարցազրոյց տալու կամ չտալու մասին կնոջ որոշումից, հարկ է  
հարգել նաև նրա առողջական վիճակի մասին խոսելու կամ չխոսելու,  
զգացմունքների մասին պատմելու կամ չպատմելու, նրա ներկայիս վի-  
ճակից փախչելու կամ չփախչելու և անձնական այլ խնդիրներին վերա-  
բերող այլ ցանկություններն ու որոշումները, անկախ նրանից, թե որքա-  
նով է կնոջ դրությունը վտանգավոր կամ սարսափելի թվում հարցազրոյց  
վարողին:

Առանց կնոջ կարծիքը հարցնելու փախուստ կազմակերպելը, իշխանու-  
թյուններին կամ ընտանիքի անդամներին դիմելը, տեղեկությունները  
փաստաբաններին հաղորդելը և այլն միշտ չէ, որ գնահատվում են կամ  
բխում են կնոջ շահերից: Օրինակ, շատ երկրներում ոստիկանություն դի-  
մելը նշանակում է հրավիրել իրենց այն մարդկանց ուշադրությունը, որոնք  
ի սկզբանե պատասխանատու են կնոջն այդ իրավիճակի մեջ դնելու հա-  
մար: Սակայն պատշաճ ձևով տրամադրված օգնությունը կարող է փրկել  
կնոջ կյանքը: (Տես՝ «9. Պատրաստ եղեք միջամտելու արտակարգ իրա-  
վիճակների դեպքում»):

## 8. ԿՆՈՉԸ ԿՐԿՆԱԿԻ ՏՐԱՎՄԱՅԻ ՄԻ՛ ԵՆԹԱՐԿԵՔ

Ձերծ մնացեք այնպիսի հարցերից, որոնք կարող են հանգեցնել զգացմունքային լարվածություն առաջացնող պատասխանների: Պատրաստ եղեք կնոջը սփոփելու և նրա ուժը շեշտադրելու:

### 8.1 ԿՆՈՉԸ ԿՐԿՆԱԿԻ ՏՐԱՎՄԱՅԻ ԶԵՆԹԱՐԿԵԼԸ

#### ՈՒԽԱԿԵՐ

Կնոջը վախեցրած, ստորացրած կամ ցավ պատճառած փորձառության մասին հարցնելը կարող է չափազանց մեծ շփոթմունք առաջացնել: Շատ կանայք ամաչում են իրենց արարքների կամ իրենց հետ պատահածի մասին խոսել: Հարցազրույցի ընթացքում կնոջը պատճառած անհանգստությունը կարող է ի հայտ գալ իրենց հարցազրույցի ժամանակ, իսկ երբեմն նաև դրանից առաջ կամ հետո: Շատ կանայք մեծ սրբես են ապրում՝ սպասելով իրենց փորձառության մասին հարցազրույցների: Հարցազրույցից երկար ժամանակ հետո կանայք կարող են նաև վերանայել իրենց ասածները և գրչալ դրանց համար: Որոշ կանաց համար ցավագին փորձառություն է ողջ գործընթացը:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Հարցերը երբեք չպետք է այնպես ձևակերպված լինեն, որ հզոր կամ էնորդինալ արձագանք առաջացնեն:
- Պետք է խուսափել այնպիսի հարցերից, որոնք կարող են սրբեսային վիճակ առաջացնել կամ կնոջը ստիպել բացահայտել տրավմատիկ մանրամասներ, որոնք անհրաժեշտ չեն նրա փորձառությունը ճիշտ հասկանալու համար:
- Պետք չէ տալ այնպիսի հարցեր, որոնցում նշանարվում է կնոջ ընդունած որոշման դատապարտում, քննադատական վերաբերմունք նրա գործողությունների կամ բնավորության նկատմամբ: Օրինակ՝ «Ձեր ծնողներն ի՞նչ կմտածեն Ձեր արածի մասին», «Դուք Ձեզ անբարոյական համարու՞ն եք», «Ինչո՞ւ եք համաձայնել այդ ամենին»:

Պետք է հիշել, որ որոշ խոնդիրներ քննարկելիս շատ կանայք որոշակի սրբես են ապրում կամ անհարմար են զգում իրենց: Սակայն շատերի համար այդպիսի խոնդիրներ քննարկելը և ուրիշի կողմից լսված լինելը կարող է ամոքիչ ազդեցություն ունենալ: Այդ պատճառով կարևոր է հիշել, որ նաման նուրբ թեմայի վերաբերյալ տեղեկություններ հաղորդելու մասին կնոջը խնդրելը, իսկ հետո՝ նրան ընդհատելը կամ մինչև նրա պատճության ավարտը դրա մասին որևէ դիրքորոշում ցուցաբերելը կարող է վհատեցնել նրան: Սակայն եթե կինը շատ է ազդվում կամ հուզվում (օրինակ՝ սկսում է դողալ, լաց լինել, նրա մոտ սկսվում է ուժեղ գլխացավ, գլխապտույտ, սրտխառնոց, դժվարանում է շնչառությունը, մարմնի վրա դուրս է տալիս կամ նա կարմրում է), այդ դեպքերում ավելի լավ է նրան հարցնել, թե ցանկանու՞ն է շարունակել, թեման փոխել, թե՞ ավարտել հարցազրույցը:

- Հարցերը հարկ է առաջադրել խարխուսող, չդատապարտող ոճով, նույն կարգով ընդունել նաև պատասխանները:
- Հարցազրույց վարողը հարցվողին պետք է թույլ տա սահմանել հարցազրույցի ընթացքն ու ուղղությունը:

Անյան աշխատում է սերսի ինդուստրիայում, ունի իրեն «հաճախորդներ» մատակարարող կողակից: Մ. անունով մի լրագրող ձևանում է որպես հաճախորդ: Անյան վստահությունը ծերը բերելուց հետո Մ.-ն բացում է իր ինքնությունը, հայտնում է, որ լրագրող է և առաջարկում է նրան օգնել «փախչել»: Լրագրողը տեսագրում է Անյան «ազատումը», ցույց է տալիս, թե նա ինչպես է դուրս գալիս իր աշխատանքի վայրից և նստում լրագրողի ավտոմեքենան: Լրագրողը հանդիպում է կազմակերպում փաստաբանի հետ և իյուրանոցում սենյակ է վարձում Անյանի համար, ընդորում հյուրանոցը շատ հեռու է փաստաբանից: Վերջին այնտեղ մնում է առանց ընկերների, աշխատանքի և երկրում օրինական կարգով գտնվելու իրավունքի: Անյան անհետանում է ֆիլմի երեր դուրս գալուց առաջ: Ասում են, որ նա վերադառնում է իր կավատ կողակիցի մոտ: Ի վերջո, ստացվում է այնպես, որ լրագրողը չի կարողանում Անյային հուսալի այլընտրանքներ տրամադրել նրա նախկին դրության փոխարեն, միգուցե նրան համոզելով, որ նրան ավելի լավ կլիներ իր հետ: Ֆիլմի ցուցադրման ժամանակ լրագրողն ամեն ինչ անում է Անյանի դեմքը ծածկելու համար, սակայն Փիլմի մեջ օգտագործվում է նրա աշխատանքային մականունը, հստակ ցույց է տրվում նրա աշխատավայրը և մի քանի անգամ ուղղակի ցույց է տրվում նրա կավատ կողակիցը:

**Երկու կին, որոնք  
համաձայնում են  
մասնակցել թրաֆիկինգի  
ուսումնասիրությանը,  
իրենց քաղաքից  
գնացքով ուղևորվում են  
մայրաքաղաք՝  
հարցագրույցին  
մասնակցելու,  
մայրաքաղաքում  
զբոսնելու և գնումներ  
կատարելու: Ավելի քան  
12 ժամ գնացքում  
անցկացնելուց հետո,  
որտեղ նրանք  
անընդհատ մտածում  
էին, թե ինչպես են  
պաշտոնական  
միջավայրում անծանոթ  
մարդկանց  
ներկայությամբ խոսելու  
իրենց փորձառության  
մասին, կանայք այնպիսի  
սրբեսի և հուզմունքի մեջ  
են ընկնում, որ  
հարցագրույցը  
ստիպված են լինում  
ընդհատել:**

- Վիզուալ և բանավոր արձագանքները պետք է ունենան ըմբռնող, չդատապարտող և սատարող բնույթ:
- Զրուցակից մոտ ընկճվածության նշաններ նկատելու դեպքում հարցագրույց վարողը պետք է արձագանքի ընդմիջում անելու առաջարկով:
- Հարցագրույց վարողը պետք է հոգատարություն ցուցաբերի և կնոջը հիշեցնի նրա ուժի և խելքի մասին, որ նրան օգնել են դիմանալ այդ դժվարին պայմաններում:
- Հարցագրույցը շարունակելու կամ չշարունակելու որոշումը կայացնում է միայն հարցվողը: Շատ կանայք, ովքեր հուզվում են հարցագրույցի ժամանակ, ցանկանում են շարունակել հարցագրույցը, սակայն կան նաև կանայք, ովքեր կնախընտրեին դադարեցնել այն: Հարցագրույց վարողը երբեք չպետք է հուզված կնոջը ստիպի շարունակել խոսակցությունը: Նմանապես, եթե հարցվողը ցանկանում է շարունակել գրույցը, երբ բոլոր հարցերն արդեն տրված են, հարցագրույց վարողը պետք է շարունակի ակտիվ և հետաքրքրությամբ լսել նրան:
- Դիշեք, որ տնից հեռու գտնվող շատ կանանց համար դժվար է խոսել ընտանիքի և հատկապես երեխաների մասին: Սա հատկապես վերաբերում է այն կանանց, ովքեր երկար ժամանակ իրենց երեխաներին չեն տեսել և հաստատ չգիտեն, թե երբ են նրանց տեսնելու, կամ ընդհանրապես տեսնելու են, թե ոչ: Շատ գգույշ եղեք հատկապես այդպիսի թեմաներից խոսելիս:

**9. ՊԱՏՐԱՍՏ ԵՂԵՔ ՄԻՋԱՍՏԵԼՈՒ ԱՐՏԱԿԱՐԳ  
ԻՐԱՎԻՆԱԿՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ  
Պատրաստ եղեք արձագանքելու, եթե կինը պնդում է, որ  
իրեն վերահաս վտանգ է սպառնում:**

## 9.1 ՇՏԱՊ ԿԱՄ ԱՆՐԱՊԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐՈՂ ԿՆՈՉՆ ԱՐՉԱԳԱՆՔԵԼԸ

### ՈՒՍԿԵՐ

Անհապաղ օգնության խնդրանքներն այնքան էլ հազվադեպ չեն մարդու իրավունքների խախտումների, այդ թվում նաև թրաֆիկինգի գոհերի հետ հարցագրույցների ժամանակ: Օգնություն առաջարկելը կարող է փրկել գոհի լյանքը և երիկական ու բարոյական պարուղ է հանդիսանում: Սակայն սխալ ձևով կամ սխալ պահին օգնություն առաջարկելը կարող է հակառակ ազդեցություն ունենալ, կամ էլ օգնություն առաջարկողները կարող են չցանկանալ կամ ի վիճակի չլինել մինչև վերջ օգնել:

### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Օգնության մասին խնդրանքը պետք է անմիջապես հարցագրույցից ավելի կարևոր դաշնա:
- Հարցագրույց վարողը պետք է հարցերի օգնությամբ փորձի պարզել, թե կնոջ կարծիքով նրան ինչ վտանգներ են սպառնում, ինչ տարբերակներ կամ և ինչպիսի հույսեր ու ակնկալիքներ ունի ցանկացած օգնությունից:

- Տարբերակների քննարկումը պետք է լինի իրատեսական և ոչ չափազանցված: Հարցազրույց վարողը պետք է քննարկի կնոջը հասու օգնության հնարավոր տարբերակները և նրան օգնի հաշվի առնել յուրաքանչյուր տարբերակի օգուտներն ու ռիսկերը:
- Հարցազրույց վարողը պետք է ամեն ինչ անի, որպեսզի կնոջը օգնի գնահատել նրան հասու բոլոր ռեսուրսները (օրինակ՝ զանգահարի տվյալ ծառայության ներկայացուցիչներին կամ կնոջն ուղեկցի այդտեղ):

#### **ՔԵՏԱԿԱԼ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՎՈՐԱԲԱՐ ՎՄԱՆԳԱՎՈՐ ԵՆ և ԱՆԽՈՒԽԵՄ.**

- Կնոջ հետ փախուստի դիմելը,
- Կնոջը հարցազրույց վարողի տուն տանելը,
- հարցվողին նրա տուն կամ աշխատանքի վայր ուղեկցելը՝ նրա իրերը հավաքելու համար,
- գործառուի, կողակցի, գործակալի, գործընկերների և այլոց հետ ինչ-որ խնդիրներ քննարկելու հարցում հարցվողին օգնելը կամ որևէ կերպ միջնորդի դերում հանդես գալը:

## **9.2 ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՔԵՏԱԳԱ ՔԱՅԼԵՐԻՆ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼԸ**

### **Ռիսկեր**

Անձնական միջամտությունը հազվադեպ է մեկ քայլից բաղկացած գործնքաց լինում. այն համարյա միշտ մի շարք լրացուցիչ գործնական քայլեր ու գործողություններ է պահանջում: Հատկապես փախուստի փորձերի դեպքում, փախուստն ինքը սովորաբար ամենաեշտ գործն է, իսկ դրան հաջորդող կազմակերպական խնդիրներն ու կնոջ խնամքը շատ պելի բարդ ու կարևոր են:

### **Խորհուրդներ**

Հազվադեպ է պատահում, եթե կնոջը պետք է միայն «ազատ արձակել», հատկապես եթե նա օտար երկրում է գտնվում: Մինչև «փախուստի» հարցում օգնելու մասին մտածելը հարկ է հաշվի առնել դրա հետ կապված բոլոր ռիսկերը, խոչընդունելը, ինչպես նաև բազմաթիվ բարդ քայլերը, որոնք պետք է ձեռնարկվեն «փախուստից» հետո, որպեսզի կինը չհայտնվի ավելի վատ դրության մեջ կամ ստիպված չլինի վերադառնալ իր անձի հանդեպ բռնացողի մոտ: Թրաֆիկինգի ենթարկված կանայք հազվադեպ են ի վիճակի լինում ինքնուրույն հայտնաբերել այն օգնությունն ու ծառայությունները, որոնք անհրաժեշտ են թրաֆիկինգի հետ կապված իրենց փորձառությունից ձերբազատվելու համար: Որոշ դեպքերում շահագործման ենթարկված կնոջն օգնելու համար պետք է ընդամենը զանգահարել թրաֆիկինգի գոհերի աշխատելու փորձ ունեցող մասնագիտական մի կազմակերպություն: Սակայն ավելի հաճախ անհրաժեշտ է գտնել ապահով ապաստան, եկամտի աղբյուրներ, բուժօգնություն, հոգեբանական, իրավաբանական ծառայություններ՝ ներգաղթածների համար, կամ այլ կարգի օգնություն:

**Ազգային  
փոքրամասնություն  
ներկայացնող կանայք,  
ովքեր թրաֆիկինգի էին  
ենթարկվել և տարվել  
հարևան երկիր,  
վերադարձվում են իրենց  
երկրի գինվորականներին,  
ովքեր հետո նրանց  
բռնաբարում են:**

**Ասիական երկրներից  
մեկում ոստիկանները  
ռեյդի են ենթարկում  
հասարակաց մի տուն և  
ներխուժում են գլխավոր  
մուտքից: Այդ պահին մի  
շաբթ այլ ոստիկաններ,  
ովքեր հասարակաց տան  
տերերից պարբերաբար  
կաշառք են ստանում,  
նրանց և շատ կանանց  
օգնում են շենքից դուրս  
գալ հետևի դրույվ:**

### 9.3 ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ

#### ՈՒԽԱԿԵՐ

Չատ կանայք չեն ցանկանում դիմել իշխանություններին: Նրանք վախենում են արտաքսումից, մտահոգություն ունեն, որ պետական պաշտոնյաները, օրինակ՝ ոստիկանները, կոռումպացված են կամ կարող են նրանց թշնամաբար կամ անտարբեր վերաբերվել: Չատ դեպքերում նրանց մտահոգությունները անհիմն չեն: Օտարերկրյա իշխանությունները կարող են կալանավորել, ձերբակալել կամ արտաքսել իրենց երկուում ապօրինի ապրու կամ աշխատող կանանց: Նրանք կարող են նաև կանանց ստիպել ցուցմունքներ տալ թրաֆիկինգով զբաղվողների դեմ՝ հաշվի չարնելով վտանգները, որ սպառնում են այդ կանանց՝ իշխանությունների հետ համագործակցելու համար: Որոշ երկրներում իշխանություններին դիմելը հավասարագոր է կանանց թրաֆիկինգով զբաղվող գործակալներին հետ հանձնելուն: Չատ աղքատ երկրներում ոստիկանությունը, բանակը և ներգաղթի ծառայությունները, իսկ երեմն նաև դեսպանությունների և հյուպատոսարանների աշխատակիցները, թրաֆիկինգի ցանցի մաս են կազմում, համագործակցում են թրաֆիկինգով զբաղվողների հետ կամ կաշառք են վերցնում նման համագործակցության համար:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Իշխանություններին դիմելուց առաջ վստահ եղեք, որ կնոջը հենց այդ տարբերակն է պետք:
- Քննարկեք իշխանություններին դիմելու հնարավոր օգուտներն ու ռիսկերը, ինչպես նաև այն, թե իշխանության տարբեր մարմիններն ինչ կարող են առաջարկել (օրինակ՝ օգնել փախչել աշխատատեղից, գործատուներին կամ թրաֆիկինգով զբաղվողներին պատասխանատվության կանչել, վկայի ժամկետը երկարացնել, երկուում մնալու թույլտվություն տալ):
- Իշխանություններին կնոջ ինքնությունը հայտնելուց առաջ պարզեք, թե տվյալ պաշտոնյան իրատեսորեն ինչ կարող է անել:
- Պարզեք կնոջ իրավունքները և դրանք քննարկեք նրա հետ (հաշվի առնելով նրա ներգաղթային կարգավիճակը, ցուցմունքներ տալու ցանկությունը կամ դրանց հրաժարվելը, վկաների պաշտպանության խնդիրները, տվյալ երկրում մնալու կամ տուն վերադառնալու նրա ցանկությունը):

## 10. ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՕԳՏԱԳՈՐԾԵՔ ՀԱՎԱՔԱԾ

### ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստացած տեղեկություններն օգտագործեք այնպես, որ դրանք օգուտ բերեն տվյալ կնոջը կամ նպաստեն թրաֆիկինգի ենթարկված կանանց համար օգտակար քաղաքականության մշակմանը:

#### 10.1 ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԹԻԿԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

##### ՈՒՍԿԵՐ

Մարդու իրավունքների ոտնահարման գոհի հետ հարցազրույց վարելը էթիկայի տեսանկյունից չեղոր ձեռնարկում չէ: Թրաֆիկինգի ենթարկված կանանց պատությունները պետք է հավաքվեն որոշակի նպատակով: Կանանց թրաֆիկինգի հետ կապված հսկայական անձնական, սոցիալական և առողջապահական գինը հարցազրույց վարողին պարտավորեցնում է ապահովել հավաքված տեղեկությունների օգտագործումն այնպես, որ դրանք օգուտ բերեն տվյալ հարցվողին կամ հրավիրեն քաղաքականություն մշակողների և մարդու իրավունքների պաշտպանների ուշադրությունը տվյալ խնդրի վրա (հիեալական տարբերակում՝ երկուսն էլ):

##### ԽՈՐՀՈՒԹՅՈՒՆ

- Կանանց իրավունքների պաշտպանների կամ ուղղակի ծառայություններ մատուցող խմբերի ներգրավումը ոչ միայն թոյլ է տալիս ապահովել հարցազրույցի անվտանգությունը, հարցազրույցի տեխնիկայի և մեկնարանությունների լիարժեք լինելը և աջակցության համակարգերի առկայությունը, այլ կարող է հիմք ստեղծել հավաքված տեղեկությունների օգտակարության, կարևորության և գործնական կիրառման համար:
- Շատ կարևոր է, որ հարցազրույց վարողները միջոցներ ձեռնարկեն, որպեսզի հրապարակված տեղեկությունները (օրինակ՝ գեկույցները, մամլո հաղորդագրությունները, հրապարակային հայտարարությունները և այլն) չխեղարյուրվեն և չգրգռեն նախապաշտոններն ու կարծուատիվերը, ինչը կարող է հանրության մեջ թշնամություն առաջացնել թրաֆիկինգի ենթարկված կանանց հանդեպ:

#### ԹԻՇՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

**ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ ԱՆԳԼԱԿԱԳՎԱԾ ՀԵՏԱԳՈՒՍՏՈՒԹՅՈՒՆԸ օԳՏԱԳՈՐԾՎԵԼ Է ԹՐԱՓԻԿԻՆԳԻ ԴԵՄ ԱՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ ՄՇԱԿԵԼՈՒ և ԹՐԱՓԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԻՋՈԳՆԵՐ ԱռԱՋԱՐԿԵԼՈՒ հԱՄԱՐ:**

#### ԹԻՇՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

**ԶՈՒԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻ ՔԱՆԻ ԵՐԿՐՈՒԹՅՈՒՄ ԱՆԳԼԱԿԱԳՎԱԾ ՀԵՏԱԳՈՒՍՏՈՒԹՅՈՒՆԸ օԳՏԱԳՈՐԾՎՈՒՄ Է ՈՐՊԵՍ ՀԻՄՔ ԹՐԱՓԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԿԱՆԱՆՑ ԽՆԱՄՔԻ և ԱՊԱՅՔԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻՆ ՎԵՐԱՊԱՄՐԱՍՏԵԼՈՒ հԱՄԱՐ:**

#### ԹԻՇՏ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

**Ուկրաինայում ՀԿ-ՆԵՐԻ ԱԺԽԱՏԱԿԻԽԾՆԵՐԻ հԵՏ ՀԱՐԾԱԳՐՈՒՅԺՆԵՐԸ ԻՆԹՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԳՈՒԵԴՐԵԼՈՒԸ հԵՏՈ ՀԱՏ ՄԱՅՐԵՐ, ՈՎՔԵՐ ՎԻՆՏՐՈՒՄ Է ԻՆ ԹՐԱՓԻԿԻՆԳԻ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԻՐԵՆԸ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ, ԱԿՍԵՏՋԻՆ ՊԱՆԳԱՀԱՐԵԼ ԻՆԹՈՒՍՏԱՏԵՏՈՒԹՅՈՒՆ:**  
**ԴԱ ՕԳՆԵց ՎԻՐԿԵԼ ԱՐՆՎԱԳՆ ՄԻ ԵՐԻՄԱՍԱՐԴ ԱՂՋԼԱ, ՈՐԸ ՊԱՀՎՈՒՄ Է Ի ԻՆՎԱԼԻԴԱՅՈՒՄ ԳՄՆՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԳ ՄԻ ՄԱՆՅԱ:**

#### ԱԽԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

**ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ ՓԻԼՄԵՐԻ ՄԻ ՌԵԺԻՄՈՐ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ Է, ՈՐ ՄԻ ԿԻՆ ԹՐԱՓԻԿԻՆԳԻ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ, ԻՆՎԱՐԿԱԴՐԱԲԱՐ ԱՇԽԱՏՈՒՄ Է ՄԵՔՍԻ ՀԻՆԴՈՒՍՏՐԻՎԱՅՈՒՄ, ԱՊԱՍՊԱՆՎՈՒՄ Է: ԿԻՆԸ ԵՐԲԵՔ ԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԵՐ ՊԱՄԵԼ ԻՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ, ԲԱՅց ԱՍԵԼ ԷՐ, ՈՐ ՆՉԱՆՎԱԾ Է ՄԻ ԳԵՐՄԱՆԱԳՈՒ ՀԵՏ: ԿԻՆԸ ՄԱՀԻՋ ՀԵՏՈ ՌԵԺԻՄՈՐԸ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ Է ԱՅԴ ԿԻՆԸ ՈՐԴՈՒ և ՄՈՐ ԱՐՁԱԳԱՆՔԸ, ԵՐԲ ՌԵԺԻՄՈՐԸ ՆԻՐԱՆ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԱՅՆ ՄԱՍԻՆ, ՈՐ ԿԻՆԸ ՍՊԱՆՎԵԼ է ՄԱՐՆՄԱՎԱԾՈՒԹՅԱՄԲ ԳՐԱԴՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:**

## ՎԵՐԶԱԲԱՆ

Սույն փաստաթղում նշված խորհուրդներն արտացոլում են ներկայիս գիտելիքները եթեկայի և անվտանգության հետ կապված այն հարցերի մասին, որոնք պետք է հաշվի առնվեն թրաֆիկինգի իրավիճակում գտնվող կամ այդպիսի իրավիճակից արդեն դուրս եկած կանաց հետ հարցազրույց վարելիս: Սակայն կանաց թրաֆիկինգը հանցագործություն է, որն անընդհատ փոխում է իր դեմքն ու ձևերը: Թրաֆիկինգի և նրա հետևանքների անընդհատ փոփոխվող դինամիկան պահանջում է, որ հարցազրույց վարողները պարբերաբար թարմ տեղեկություններ քաղեն այդ երևույթի մասին, որպեսզի հարցազրույցից առաջ ընթացքում և հետո հստակ ծրագրեր ունենան կնոջ բարօրությունն ապահովելու համար: Շատ դեպքերում դա նշանակում է, որ հարցազրույցի գործընթացը պետք է ավելի երկար տևի, ավելի շատ նախնական ուսումնասիրություններ ու պատրաստություն պահանջի, ինչպես նաև՝ ավելի մեծ շրջահայացություն անհատների և նրանց իրավիճակի նկատմամբ: Բացի այդ, ամենայն լրջությամբ պետք է քննարկվի հարցազրույցի ընթացքում հավաքված տեղեկությունների պատշաճ իրապարակնան հարցը: Սույն խորհուրդներին հետևելով և կանաց անվտանգությանը միշտ առաջնային կարևորություն տալով՝ հարցազրույցների արդյունքում ստացված տեղեկություններ պահանջողները և հարցազրույց վարողները կարող են իրենց կարևոր ավանդն ունենալ այդ լուրջ հանցագործության մասին հանրության գիտելիքների մակարդակը և թրաֆիկինգի ենթարկված կանաց խնամքի որակը բարձրացնելու հարցում:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<sup>1</sup> United Nations. (2000). United Nations Protocol to Prevent, Suppress, and Punish Trafficking in Persons, especially women and children, supplementing the United Nations Convention Against Transnational Organized Crime, Article 3 (a-d), G.A. res.55/25, annex II, 55 U.N. GAOR Supp. (No. 49) at 60, U.N. Doc. A/45/49 (Vol. I).

<sup>2</sup> World Health Organization (WHO). (1999). Putting Women's Safety First: Ethical and Safety Recommendations for Research on Domestic Violence Against Women, Geneva: WHO

<sup>3</sup> Office of the United Nations High Commissioner for Human Rights. (2002). International Principles and Guidelines on Human Rights and Human Trafficking. Geneva: UNHCR.

<sup>4</sup> Council for International Organizations of Medical Sciences, in collaboration with the World Health Organization. (1993). International Ethical Guidelines for Biomedical Research Involving Human Subjects. Geneva: CIOMS.

<sup>5</sup> Global Alliance Against Traffic in Women (GAATW). (2001). Human Rights and Trafficking in Persons: A Handbook. Bangkok: GAATW.

<sup>6</sup> Presswise. (2002). Ethical Topics. Gender. Women. URL: [www.presswise.org.uk](http://www.presswise.org.uk)

<sup>7</sup> Kelly, L. (2000). VIP guide: Vision, Innovation and Professionalism in Policing Violence Against Women and Children. Produced for the Council of Europe Police and Human Rights 1997-2000 Programme. Strasbourg: Council of Europe. [On-line report] URL [http://www.coe.int/T/E/human\\_rights/Police/2.\\_Publications/2.\\_VIP\\_Guide/VIP%20GuideDecember%202001%20\(pdf%20version\).pdf](http://www.coe.int/T/E/human_rights/Police/2._Publications/2._VIP_Guide/VIP%20GuideDecember%202001%20(pdf%20version).pdf)

<sup>8</sup> Թրաֆիկինգի ենթարկված կանանց հետ աշխատելու մասին լրացուցիչ տեղեկությունների համար սեռ՝ Global Alliance Against Traffic in Women (GAATW). (1999). Human Rights in Practice: a Guide to Assist Trafficked Women and Children. Bangkok: GAATW.

<sup>9</sup> Zimmerman, C., Yun, K., Shvab, I., et. al. (2003). The Health Risks and Consequences of Trafficking in Women and Adolescents. Findings from a European study. London: London School of Hygiene and Tropical Medicine (LSHTM), Daphne Programme of the European Commission.

<sup>10</sup> World Health Organization (WHO). (1999). Putting Women's Safety First: Ethical and Safety Recommendations for Research on Domestic Violence Against Women. Geneva: WHO.

Հրատարակվել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից 2003թ. *WHO Ethical and safety guidelines for interviewing trafficked women* վերնագրով:

© Առողջապահության համաշխարհային կազմակերպություն 2003թ.

Առողջապահության համաշխարհային կազմակերպության գլխավոր տնօրենը հայերեն հրատարակության թարգմանչական իրավունքը շնորհել է Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությանը, որը պատասխանատու է միայն հայերեն հրատարակության համար: